

ԹԵՐԵՉԸ ՅԻՄՈՒ ՄԱՆԿԱՆ

# ԵՐԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Ինքնակենսագրական ձեռագրերը)

ՄԱՍԻ Ա.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Վահէ Ղազարեան*

# ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1897 թուականի Սեպտեմբերին, Ֆրանսական գիւղաքաղաքներից մէկի կարմեղական վանքում, ընդմէջ մահավտանգ հիւանդութեան տառապանքների, դեռ շարունակում էր ժպտալ մի քսանչորսամեայ երիտասարդ միանձնուհի, որի վերջին պահը չէր ներկայանում այլևս հեռաւոր: Այս մօտալուտ դէպքի մասին մտածելով եւ խորհելով դամբանական ճառի շուրջ – որի ընթերցումը բոկոտն կարմեղականների համար կարելի էր ասել անձեռնմխելի ու անփոփոխ աւանդութիւն էր եւ պարտականութիւն – այդ երիտասարդ միանձնուհու միաբանակից քոյրերից մէկը ամենայն (նոյնիսկ չափազանց) անկեղծութեամբ ասաց հետեւեալ խօսքերը, որոնք լսելի եղան նաեւ հիւանդի համար. «Արդարեւ հարցնում եմ ինքս ինձ, թէ մեր Մեծաւոր Մայրը արդեօք ի՞նչ կարող է գրել քոյր Թերեզայի մասին: Ի՞նչ էք կամենում, որ գրուի մի միանձնուհու մասին, որ միայն գորով ու քնքշանք է ստացել բոլորից, եւ որ չի շահել առաքինութիւնը ինչպէս մենք, ի գին ծանր պայքարների ու տառապանքի: Այո՛, հաճելի ու առաքինի անձնաւորութիւն է, հեզ ու քաղցրիկ բայց սա բնական է իր համար, պարզապէս իր բնաւորութիւնն է, ուրիշ ոչինչ»:

Բարեբախտաբար Թերեզան այլևս վարժ էր ապրելու միմիայն Աստծոյ հայեացքի ներքոյ, հաշուի չառնելով Աստծոյ տեսակէտներից ու կարծիքներից բացի ուրիշ ոչինչ: Իսկ դամբանաճառը, առաւել՛ էւս, նրան այնքան էլ չէր հետաքրքրում: «Ինչպիսի՛ մեծ խաբկանք է Սրբերի մասին մտածելն ըստ մարդկային դատողութեան, – դուրս փախաւ մեր Սրբուհու բերանից մի օր, մինչ գրուցում էր քոյր Փրնըվիէի հետ: – Քանի՛ կարմեղականներ դատապարտուել են ժառանգելու անհանձար դամբանաճառեր, արդիւնքում չարժանանալով որեւէ մեծարանքի, մինչ սովորական առաքինութիւններով միայն զարդարուած ուրիշներ թուացել են զմայելիլ, որովհետեւ իրենց մեծաւորուհին կիրթ էր գեղազրական արուեստում: Յիրաւի, չեմ կարող բաղձալ բարակ թելից միայն կախուած նմանօրինակ փառքի ... »:

Յիսուս Մանկան քոյր Թերեզայի փառքն, իրօք, կապուած էր լինելու ինչ որ մի առաւել որակեալ իրողութեան, քան քիչ թէ շատ ձեւական դամբանաճառերը: Բայց այս վերջինները նոյնպէս, եթէ կատարուում էին հաւատարմութեամբ, տհաճ չէին Սրբուհուն, որովհետեւ, իր իսկ խօսքերի համաձայն, «այնքա՛ն քաղցր է ինչ որ մի բան իմանալը նրանց մասին, որոնց հետ յաւէտ ապրելու ենք Աստծոյ Արքայութիւնում»:

Թերեզայի մահից մի քանի օր յետոյ, իսկոյն, ծայրագոյն գաղտնապահութեամբ, առանց վանական հասարակութեան տեղեակ լինելուն, մայր Ագնէս Յիսուսին եւ մայր Մարիամ Գոնձական (վանքի նախկին եւ ներկայ մեծաւորուհիները) միմեանց միջեւ համաձայնում էին հրատարակելու ոչ միայն պարզունակ մի ճառ, այլ մի ամբողջական հատոր, որ սահմանուած էր դէպի յաւիտենութիւն անցած երիտասարդ միանձնուհու կերպարը ամենալայն հասարակութեանը ծանօթացնելուն: Յիսուս Մանկան քոյր Թերեզան, իր կեանքի վերջին երկու տարիների ընթացքում, յանուն հնազանդութեան շարադրել էր երկու ինքնակենսագրական գրութիւններ, որոնցից առաջինը մայր Ագնէս Յիսուսի, իսկ երկրորդը՝ մայր Մարիամ Գոնձականի հրամանով՝ ձեռագրերը հասցէագրուած էին նոյն անձանց: Այս երկու ինքնակենսագրութիւններից

բացի, Թերեզյան, զիջելով իր ակազ քոյր Մարիայի յամառ խնդրանքներին, այս վերջինին ուղղել էր մի երկար նամակ, որն իրենից ներկայացնում էր իրական ու գրեթե ամբողջական բացայայտումը Սրբուհու ներքին հոգեւոր ապրումների, իղձերի ու գաղափարների. այս նամակը գալիս էր ամբողջացնելու նախորդ գրութիւնները: Վանքի Մեծաւորուհին՝ մայր Մարիամ Գոնձական, սակայն, կամեցաւ՝ որ երեք տարբեր գրութիւնները վերատեսնուէին – մասնակիօրէն – սրբագրուէին ու շաղախուէին մէկ միասնական գրութեան մէջ, ուղղուած միայն իրեն:

Վերանայման, մաքրագրման ու միաւորման նրբին աշխատանքը կատարեց նոյն ինքն մայր Ագնէս Յիսուսին, որի պատրաստած ակելի քան 500 էջ հաշուող հատորը առաջին անգամ լոյս տեսաւ 1898ի Սեպտ. 30ին, Թերեզայի մահուան առաջին տարեկիցին, հետեւեալ տիտղոսով. «Seour Thérèse de l'Enfant Jésus et de la Sainte Face, Religieuse Carmélite (1873-1897). Histoire d'une ame, écrite par elle-même. Lettres. Poésies» (Bar-le-Duc, Impr. de l'Oeuvre de Saint-Paul): Գրութեանը կցուել էին նաեւ Սելինին ուղղուած տասնութ նամակներ, Սրբուհու կողմից շարադրուած մի քանի աղօթքներ եւ յիսուներկու բանաստեղծութիւններ: Տպագրուել էր 2000 օրինակ: Երբ հատորները տպարանից հասան վանք, ապշած միանձնուհիներից մէկը բացականչեց. «Ի՞նչ ենք անելու այս գրքերը: Սրանք դատապարտուած են շտեմարանում մնալու»:

Բայց մարդկային դատողութիւնները միշտ չէ, որ ճիշտ նպատակակէտին են խփում: «Հազիւ թէ քոյր Թերեզայի կենսագրութիւնը ընթերցուեց մի քանի անձանց կողմից, եղաւ ինչպէս կայծը, որն իր ճանապարհին ամէնուր հրդեհ է առաջացնում: Եթէ նոյնիսկ կամենայինք, չէինք կարող խոչընդոտել այդ հրդեհի առաջխաղացմանը», – վկայում էր հետագայում Սելինը Սրբադասման Դատավարական Ընթացքին: Սակաւաթիւ ամիսներ յետոյ, հատորից չէր մնացել եւ ոչ իսկ մի օրինակ: Անհրաժեշտութիւնը զգացուեց մտածելու մի երկրորդ, ապա երրորդ եւ այսպիսով մի անվերջանալի շարք հրատարակութիւնների մասին, որոնք յաջորդաբար տեղի ունեցան 1899, 1900, 1901, 1902, 1903, 1906, 1907 ... թուականներին, մինչ արդէն սկսում էին կատարուել այլալեզու թարգմանութիւնները, խանդավառուած՝ բնագիր Փրանսերէնի ոչ այնքան նուազ յաջողութիւնից: Շնորհիւ իր Մի Կեանքի Պատմութեան, Յիսուս Մանկան քոյր Թերեզյան նուաճում էր աշխարհն ամբողջ, ներկայանալով Աստծոյ ճանապարհներն ուսուցանող հսկայ անձնաւորութիւնների առաջին շարքերում: Որպէս մէկ միասնական հատոր ներկայացող այս գրքի հայերէն առաջին թարգմանութիւնը Սուրբ Ղազարի Մխիթարեան Տպարանից լոյս է տեսել 1930 թուականին, Հ. Սամուէլ վրդ. Արամեանի աշխատասիրութեամբ եւ արտօնութեամբ Սրբուհի Թերեզայի հարագատ քրոջ՝ Սելինի, որի յարգալի ու ջերմեռանդ նամակը՝ ուղղուած Հ. Սամուէլ վարդապետին, մինչեւ օրս պահուում է Սուրբ Ղազարի դիւանում:

Ինչպէս արդէն նշեցինք, մայր Մարիամ Գոնձակայի պահանջով (սկզբնական դժուարութիւններն ու պատասխանատուութիւնները իր վրայ վերցնելու գովելի դիտաւորութեամբ թերեւս) երեք գրութիւնները միացուել էին եւ կազմել մէկ միասնութիւն: Ոչ ոք սկզբում չկարողացաւ երեւակայել, որ խօսուում էր երեք տարբեր բնոյթ կրող գրութիւնների մասին, ուղղուած՝ զանազան հասցէատէրերի: Այսօրինակ համբերատար աշխատանքը կատարուեց մայր Ագնէս Յիսուսի կողմից, որի հրամանը կատարելու ժամանակ Թերեզյան չէր մտածում անգամ, որ իր մանկութեան ու երիտասարդութեան շրջանի յուշերը հրատարակուելու էին եւ ներկայացուելու լայն հասարակութեանը. Սրբուհին այն համոզմանն էր, որ իր յուշերը ծառայելու էին

իրենց ընտանեկան կեանքի դրուագները իր քոյրերի յիշողութեան մէջ վառ պահելուն, որովհետեւ դրանք յուշեր էին աստուածապաշտութեան ու առաքինութեան: Բայց իր կեանքի վերջին օրերի ընթացքում Թերեզային տեղեկացնում են այն դերին, որ խաղալու էին իր ձեռագրերը իր մահից յետոյ: Մտածելով այս վերջին փաստի շուրջ, Սրբուհին մի օր ասում է մայր Ագնէս Յիսուսին. «Հարկաւոր է, որ դուք վերանայէք դրանք ... : Մայր իմ, այն ամէնը՝ որ յարմար կը համարէք ջնջելու կամ աւելացնելու, կը լինեմ ես ինքս, որ կը ջնջեմ ու կ'աւելացնեմ: Յիշեցէք սա եւ կատարեցէք ձեր գործն առանց խղճահարուստութիւնների»:

Նմանօրինակ արտօնութեամբ զինուած (նոյնիսկ մի քիչ տառացի կերպով հասկանալով այն) եւ Թերեզայի «մայրը» լինելու իր բարոյական իրաւունքից մղուած, մայր Ագնէս Յիսուսին գործի անցաւ: Կատարուած աշխատանքի մասին մի առաջին ծանօթութիւն ունենալու համար բաւական է տեսնել 1910ի Օգոստ. 17ին Սրբադասման Դատարանին տուած իր իսկ վկայութիւնը. «Կատարուել են որոշ փոփոխութիւններ, որոնք սակայն մեծ կարեւորութիւն չունեն եւ չեն փոխում հիմնական իմաստն ու պատմութեան էութիւնը: Այդ փոփոխութիւններն են. 1) Չհրատարակումը մի քանի կարճ հատուածների, որոնք փրաբերուում են Թերեզայի մանկութեանը. 2) Չհրատարակումը մի քանի էջերի, որոնք վերաբերում էին Կարմեղոսի ներքին կեանքին, եւ որոնք նուազ հետաքրքրական գտայ մեր վանքին օտար անձանց համար. 3) Քանի որ մայր Մարիամ Գոնձական կամեցաւ ներկայացնել գրութիւնը որպէս միայն իրեն ուղղուած մէկ միասնութիւն, հարկաւոր եղաւ որոշ փոփոխութիւններ մտցնել միւս երկու գրութիւնների մէջ, միաւորելու համար երեք տարբեր ձեռագրերը»:

Կատարուած աշխատանքի շուրջ աւելի խոր ծանօթութիւն ունենալու համար, սակայն, մէջբերենք ձեռագրերը տարիներ շարունակ ուսումնասիրած François de Sainte Marie անուանակիր վարդապետի վկայութիւնը, տրուած մեծ անկեղծութեամբ եւ հոգեբանական նրբութեամբ. « ... Մի կեանքի Պատմութեան հրատարակչուհին բաւական վեհանձն է գտնուել սրբագրումների դաշտում: Կքուելով իր "դասեր" ձեռագրերի վրայ, նա վերագտել է իրեն այն նոյն զուտ մարդկային յարաբերութիւնների վիճակում, որ ունէր Սրբուհու հետ անցեալում: Մանուկներն իրենց ծնողների եւ ուսուցիչների աչքին չեն մեծանում երբեք: Մայր Ագնէս Յիսուսին սրբագրել է ինքնակենսագրական ձեռագրերն այնպէս՝ ինչպէս մի ժամանակ սրբագրում էր փոքրիկ Թերեզայի տնային առաջադրանքները ... : Միւս կողմից, սակայն, նրա համար էականը հոգիներին հասնելն էր, նրանց բարեգործելը՝ պայքարելով եկեղեցական որոշ միջավայրերում դեռեւս կենդանի մնացած ժանսենականութեան վերջին մնացորդների դէմ: Նա համոզուած էր, որ Թերեզան հրաշալի գործիք էր իր ձեռքերում, այդ գործն ի կատար ածելու համար: Իսկ շարադրանքը նրա համար ոչ մի կարեւորութիւն չունէր ... :

Իրականում, մայր Ագնէս Յիսուսին վերաշարադրել է Թերեզայի ինքնակենսագրութիւնը ... :

... Սկսելով անկարեւորներից մինչեւ կարեւորագոյնները, ձեռագրերի եւ հրատարակուած հատորի միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները հասնում են մօտ 7000ի»:

Միայն 1947 թուականին էր, մինչ հրատարակութեան էր պատրաստուում Սրբուհի Թերեզայի ամբողջական Նամականին (238 նամակներ), որ լրջօրէն մտածուեց Մի կեանքի Պատմութեան բնագիրը մարդկութեանը նուիրելու մասին:

Բայց քանի որ աշխատանքները յետաձգվում էին, մայր Ազնէս Յիսուսին, 1950ի Նոյ-2ին գործի շարունակութիւնը պաշտօնապէս յանձնեց Սելինին, ասելով. «Յանձնարարում եմ ձեզ ի կատար ածել այդ հրատարակութիւնը յանուն իմ, բայց մահիցս յետոյ միայն»:

Մայր Ազնէսի մահից (28 Յուլիս 1951) անմիջապէս յետոյ վերսկսուեցին հրատարակութեան նախապատրաստական աշխատանքները, որոնք իրենց աւարտին հասնելով 1956ին, ինքնակենսագրական Ձեռագրերի հրատարակումը հնարաւոր դարձրին 1957ին, Սրբուհու մահից եւ Մի Կեանքի Պատմութեան լոյս աշխարհ գալուց վաթսուն տարի յետոյ: Եւ ահա այս հարազատ կերպարանքով է, որ հայ հոգեւէր ընթերցողներին ներկայանում է այս նոր թարգմանութիւնը – «Երգել Տիրոջ Ողորմութիւնը» նոր վերնագրով – որի չորս հիմնական մասերին կ'ուզէինք ծանօթացնել առանձնակի կերպով:

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԵՌԱԳԻՐԸ

Պատմութիւնն է Թերեզայի մանկապատանեկան տարիների, գրուած՝ մայր Ազնէս Յիսուսի հրամանով: Կրում է հետեւեալ վերնագիրը. «Histoire printanière d'une petite Fleur blanche», եւ ծաւալւում է 86 թերթերի վրայ, հաւասար 172 էջերի: Գրուած է մանրիկ տառերով, չգծուած սպիտակ թղթի վրայ, որի էջերում կարելի է հաշուել 25, 26 եւ երբեմն նոյնիսկ 27 տող: Աղքատութիւնը սրբազան պարտականութիւն էր խոնարհ կարմեղուհու համար, որ ջանում էր գրելու ընթացքում սպառել թղթի հնարաւոր նուազագոյն քանակը: Ձեռագրի պատմութիւնը համապատասխանում է նախկին Մի Կեանքի Պատմութեան առաջին ութ գլուխներին եւ ընդգրկում է իր մէջ Սրբուհու կենսագրութիւնը մինչեւ Սելինի մուտքը Կարմեղոս (14 Սեպ. 1894) եւ իր իսկ Սրբուհու ինքնանուիրումը Աստուծոյ Ողորմած Սիրոյն (9 Յունիս 1895 ?):

Ձմեռնային մի երեկոյ, 1895ի սկզբին, Լիզէոյի կարմեղականները հաւաքուած էին վանքի միակ տաքացուող սենեակում ու մտերմօրէն զրուցում էին: Ահա մի զարմանալի ու արտասովոր իրողութիւն. վառարանի մօտ ուրուագծւում են երեք սեւ քօղեր: Մարթին քոյրերն են. մայր Ազնէս Յիսուսի, քոյր Մարիա Սուրբ Սրտի, քոյր Թերեզա Յիսուս Մանկան: Շատ հագուադէպ է նրանց միասին տեսնելը: Քոյր Թերեզան ոգեւորում է խօսակցութիւնը, կենդանի գոյներով պատմելով իրենց մանկութեան որոշ դրուագներ: Քոյր Մարիան – նոյն ինքն է այս դէպքը պատմողը – պատմութեան թարմութիւնից զմայլուած եւ մղուած մի ակնյայտ ներշնչումից, շրջում է դէպի մայր Ազնէս Յիսուսին, վանքի այդ օրերի մեծաւորուհին, եւ առանց աւելորդ նախաբանների ասում. «Հնարաւոր բան է արդեօք, որ թոյլատրում էք նրան (Թերեզային) զանազան բանաստեղծութիւններ շարադրել այս կամ այն միաբանակցին հաճոյք պատճառելու համար, եւ որ չէք պատուիրում թղթին յանձնել իր մանկութեան յուշերը: Կը տեսնէք, (Թերեզան) մի հրեշտակ է, որ երկար չի մնալու երկրի վրայ, իսկ մենք զրկուած ենք մնալու այս բոլոր մանրամասներից, այնքա՛ն հետաքրքիր մեր համար»: Մայր Ազնէսն իր հերթին վկայում է, որ Թերեզան, լսելով այս խօսքերը, պատասխանել է մի պարզունակ ծիծաղով, կարծես թէ իր աւագ քոյրը կամենում էր ծաղրել իրեն: Մեծաւորուհին առաջին պահին չհամաձայնուեց քոյր Մարիայի ստաջարկին, բայց քիչ անց շրջուեց դէպի քոյր Թերեզան եւ հրամայեց նրան յանուն հնազանդութեան գրի առնել այն ամէնը՝ որ յիշում էր իր մանկութիւնից, նաեւ աւելացնելով թէ իր համար մեծ հաճոյք կը լինէր այդ գրութիւնը իր անուան տօնին ստանալը, 1896ի Յունուարի 21ին:

Վախւորած ապշանքի մի պահից յետոյ, Սրբուհին հարցնում է Մեծաւորուհուն եւ քրոջը. «Ի՞նչ էք կամենում, որ գրեմ եւ նորութիւն լինի ձեր համար»: Եւ սակայն, յանուն հնազանդութեան, գործի է լծուում: Հաւանաբար 1895ի Յունուարի վերջերին է, որ «ժպիտի» Աստուածամօր արձանիկի առջեւ ծնրադրելուց եւ իր ձեռքը դեկավարել խնդրելուց, հոգու մէջ գլուխ բարձրացնող ներքին խռովքի առաջին զգացումները յաղթահարելուց յետոյ, Թերեզան սկսում է գովերգել Տիրոջ ողորմութիւնը: Յիսուս նրան հասկացրել էր, որ միամիտ հնազանդութեամբ հաճելի կը լինէր Իրեն, եւ նա խոնարհաբար գործի էր անցել: Մայր Ազնէս Յիսուսին նրան էր փոխանցել իրենց մօր՝ Ձէլիա Գէրէնի թանկագին նամակներից մի քանիսը, որպէսզի օգնէին Թերեզային յիշելու մանկութեան մանրամասները: Սրբուհին որոշ մէջբերումներ է կատարում դրանցից կենսագրութեան մէջ, բայց խիստ չափաւոր կերպով: Նախընտրում է թողլքել իրեն Սուրբ Հոգու ներքին առաջնորդութեանը, գրելով պարզապէս այն՝ ինչ բխում էր սրտի խորքում:

Կարծում էր՝ թէ գրում է միայն իր քոյրերի համար, որոնք իր պէս միանձնուհիներ էին միեւնոյն վանքում, եւ հոգու բացարձակ ազատութեամբ թողնում էր գրչին նշանագրել թղթի վրայ այն ամէնը՝ որ կրում էր հոգու խորքում, եւ որն անխաբ կերպով օգտակար էր սեպում բոլոր նրանց համար՝ ովքեր ընթերցելու էին իր պատմութիւնը: Լինելով նորընծայուհիների փոխմեծաւորուհին, վանական ա՛յլ պարտականութիւններով հանդերձ, համոզուած՝ որ «ժամանակն իրեն չէր պատկանում», աշխատում էր առանց որեւէ ինքնախնայման, նիւթական գործերին տրուելով ոչ միայն աղքատութեան ուխտը լաւագոյնս ապրելու համար, այլ յատկապէս փայփայելով իր մէջ առաքելական նպատակներ: Կամենում էր – լրջօրէն ու աստուածաբանական բարձրագոյն մաքրափայլ սիրով աշխատելով – «կեանք շահել իր որդիների համար», իր բոլոր եղբայրների ու քոյրերի, այսինքն՝ ամբողջ մեղաւոր մարդկութեան համար: Ահա այս պատճառով է, որ ժամանակը պէտք է գործածէր ծայրագոյն հաւատարմութեամբ: Գեղեցիկ է նորընծայուհիներից մէկին ուղղած իր այս յանդիմանութիւնը, մինչ նա հմայուած դիտում էր պարտէզի ծաղիկները. «Այսպէ՞ս է, որ մեզ ազատութիւն ենք տալիս, երբ որդիներ ունենք անելու եւ պարտաւոր ենք աշխատել, նրանց կեանքն ապահովելու համար: Ուտքի՛ ել, շտապենք, որովհետեւ եթէ մենք ժամանակ կորցնենք, մեր որդիները սովից կը մեռնեն»:

«Իր կեանքի պատմութիւնը» գրի առնելու համար, Թերեզան իր տրամադրութեան տակ ունէր սոնական օրերի սակաւաքանակ ազատ ժամերը միայն: Ճանաչելով Սրբուհու սիրալիութիւնը հանդէպ բոլորի եւ նրա պատրաստակամութիւնը նուիրելու սեփական ժամանակը՝ ինչ որ մէկին գէթ փոքրիկ հաճոյք պարգեւելու համար, կարողանում ենք ըմբռնել, որ նա չէր կարող գրել՝ եթէ ոչ միայն «à batons rompus» – ինչպէս վկայում է Սելինը – այսինքն՝ փոքրիկ հատուածներով ու յաճախակի ընդմիջումներով, այն սակաւաթիւ ազատ պահերին՝ որ իրեն շնորհում էին վանական օրէնքը, նորընծայուհիներն ու միաբանակիցները, թողնելով իրեն իր սենեակի առանձնութեան մէջ, ազատ այլեւայլ պարտականութիւններից: Սրբուհու միեւնոյն քոյրը նաեւ նշում է, որ նա պատմութիւնը շարադրում էր առանց սեւագրութեան, թողնելով գրչին սահել անցնել, մէկ անգամ գրուածի վրայ այլեւս չվերադառնալու համար:

Թովիչ է նրան պատկերացնելը խիստ լուռութեան ժամերին, յոգնաշատ օրուայ վերջում, ամփոփուած իր խցի մի անկիւնում, զբաղուած յուշագրութեամբ: Փոքրիկ աթոռակի վրայ նստած, ծնկներին ունի ողորկ մակերեսով արկղանման մի «գրասեղան», որ գտել է ձեղունում (գրեթէ անգործածելի), եւ որը հետագայում

զիջելու է Սելինին, վերջինիս կարմեղոս մտնելուց յետոյ: Այդ «գրասեղանն» իր համար նկատուած էր «չափազանց գեղեցիկ»: Սենեակը լուսաւորուած է ձէթի ճրագի տոբոյն լոյսով. այս ճրագը նուէր է ստացել իր զարմուհուց՝ Մարիամ Գէրէնից: Սա նոյնպէս գրեթէ անգործածելի փոքրիկ ճրագ-ջահ է. յօրինուածքը խափանուած է վաղուց ի վեր եւ Թերեզան հարկադրուած է ժամանակ առ ժամանակ վեր բարձրացնել պատրոյգը՝ փոքրիկ գնդասեղի օգնութեամբ: Դա անում է առանց համբերութիւնը կորցնելու, ամենայն պարզութեամբ. եւ իրական աղքատութեան ոգուց մղուած, միշտ ուշադիր է՝ որ պատրոյգը անհրաժեշտ լոյսը տալու բարձրութեան վրայ լինի միայն, ո՛չ աւելի:

Պատմութիւնը սկսում է իր ընթացքը պարզ ու ներդաշնակ կերպով: «Սպիտակ փոքրիկ ծաղկի գարնանային պատմութեան» մէջ իսկոյն ճանաչուած է «Մի Կեանքի Պատմութիւնը», եւ մանկութեան ու պատանեկութեան յուշերը վերածուած են Յիսուսի նախախնամ ողորմութեանն ուղղուած սիրոյ գովերգի: Առաջին թոթովանքները հայրական տան մէջ, մօր մահը, տեղափոխումը Լիզէոյ, հօր եւ քոյրերի հոգատար խնամքները, դաստիարակութիւնն ու կրթութիւնը, առաջին խոստովանանքն ու առաջին Հաղորդութիւնը, հիւանդութիւնը եւ Սուրբ Կոյսի ժպիտը, կարմեղական կոչման հասունացումը, ուխտագնացութիւնը Հռոմ, մուտքը «օրհնեալ տապան», վանական առաջին փորձութիւնները: Այս բոլորը Թերեզայի գրչի տակ երանգաւորուած են մի շնորհալի լոյսով, որը ներկայ ու տեսանելի է դարձնում – կարելի է ասել – Յիսուսի խորհրդաւոր ծածուկ գործունէութիւնը, որ պատրաստում, տրամադրում եւ գեղեցկացնում է նրան՝ ում ընտրել է լինելու աւետարանիչը իր ողորմած Սիրոյ: Թերեզան գրում է այս տողերը «աւետարանական մանկութեան փոքրիկ ճանապարհի» բացայայտման կամ առնուազն՝ արժէքաւորման եւ կատարեալ ըմբռնման տարուայ ընթացքում, այն տարուայ՝ որում տեղի է ունենում սրբութեան հանդէպ իր մեծագոյն դիրքորոշումը, որին կամենում է հասնել. մնալ փոքր՝ հաճելի լինելու համար Ողորմութեանը: Յունիս ամսուայ մէջ որպէս ողջակէզ զոհ է նուիրում ողորմած Սիրոյն, պաղատելով Աստծուն գոհացնել իր «անսահմանօրէն վիթխարի» փափաքները, նոյն Ինքն դառնալով իր սրբութիւնը: Եւ Սէրը տարածուած է նրա ամբողջ էութեամբ մէկ. «Այդ երջանիկ օրից ի վեր, թւում է ինձ՝ թէ Սէրը ներթափանցում է ամբողջ էութեամբս մէկ եւ պատում է ինձ, վերանորոգում է ու մաքրագործում հոգիս ... »:

Չունի այլեւս փափաքներ, բացի այն մէկից. «սիրել Յիսուսին խենթի նման»: Այս «փոքրիկ» փափաքը իրական համառօտումն է ինքնանուիրման աղօթքում ներկայ առաջադրութեան. «Կամենում եմ աշխատել միմիայն սիրոյդ համար, որպէս միակ նպատակ ունենալով Քեզ հաճոյք պարգեւելը, Սուրբ Սիրտդ մխիթարելն ու հոգիներ փրկելը, որպէսզի կարողանան սիրել Քեզ յաւիտեան»: Հոգիներ փրկելու փափաքը, որ աճել էր Փռանցիների նշանաւոր դարձի շնորհից յետոյ, ձուլուած է Աստծոյ եւ իր Սիրոյ վիթխարի միակ փափաքի մէջ. «Ուզում եմ սիրել Քեզ եւ այնպէս անել՝ որ բոլորը սիրեն Քեզ. ուզում եմ աշխատել Սուրբ Եկեղեցու փառքի տարածման համար, փրկելով հոգիներին ... »:

«Ողորմութեան գովերգը» փակուած է Տիրոջ բարութեան հանդէպ անսասան վստահութեան արտայայտութիւններով: Գրութեան բոլոր առանցքային նիւթերը համառօտուում եւ շողկապում են «սպիտակ փոքրիկ ծաղկի» կերպարի մէջ, որը վստահ է՝ թէ «Աստծոյ ողորմութիւնը ընկերակցելու է իրեն միշտ եւ ամէնուր», եւ որի բաղձանքն է յաւիտեան եղանակել «Սիրոյ միշտ նոր երգը»:

Այս առաջին գրութիւնը Թերեզան աւարտեց 1895ի վերջերին, եւ 1896ի Յունուարի 20ին, մայր Ագնէս Յիսուսի անուան տօնի նախօրեակին, անյապաղ ճշգրտութեամբ յանձնեց այն պահանջողին:

«Մի քանի ընթացիկ սկսուելու էր երեկոյեան ժամերգութիւնը, – պատմում է նոյն ինքն մայր Ագնէսը: – Իմ մօտով անցնելիս, քոյր Թերեզան աղօթարանիս վրայ դրեց այս գանձը: Պատասխանեցի գլխի թեթեւ շարժումով եւ դարանի մէջ դրի ձեռագիրը աւանց բացելու, եւ ժամանակ չգտայ այն ընթերցելու համար, եթէ ոչ այդ տարուայ ընտրութիւններից յետոյ միայն, գարնանը: Այսպիսով, հնարաւորութիւնն ունեցայ նկատելու Աստծոյ Աղախնի առաքինութիւններից եւս մէկը, որովհետեւ հնազանդութեան իր պարտքը վճարելուց յետոյ՝ այլեւս երբեք չհետաքրքրուեց իր յուշատետրով, ո՛չ հարցնելով թէ արդեօք կարդացի այն, ո՛չ էլ ջանալով իմանալ՝ թէ ինչ կարծիքի եմ դրա փրաբերեալ: Մի օր, մինչ ես ինքս յայտնեցի՝ թէ դեռեւս ժամանակ չէի գտել այն ընթերցելու համար, տրտմութեան ոչ մի նշոյլ չուրուագծուեց նրա հայեացքում»:

Երկու ամիս յետոյ միայն, մայր Մարիամ Գոնձակայի Մեծաւորուհի ընտրուելուց յետոյ (21 Մարտ 1896), մայր Ագնէս Յիսուսին – այլեւս պարզ միանձնուհի – կարողացաւ ընթերցել Թերեզայի ինքնակենսագրութիւնը եւ տօնական ազատ օրերի ընթացքում հատուած առ հատուած պատմել քոյրերին: Մարթին քոյրերից բացի ուրիշ ոչ ոք, եւ ոչ իսկ իրենց միեւնոյն վանքի միանձնուհիները, այդ շրջանում տեղեակ չէր նմանօրինակ ձեռագրի գոյութեանը:

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՁԵՌԱԳԻՐԸ

Այս երկրորդ գրութեան համար նոյնպէս պարտաւոր ենք քոյր Մարիային: 1896ի Մայիսի 10ի առաւօտեան, քոյր Թերեզան անցողիկ ակնարկով պատմել էր նրան այն միխթարական երազը, որում տեսել էր երանաշնորհ Աննա Յիսուսին՝ Սրբուհի Թերեզա Աւիլացու ընկերուհուն եւ գաղափարական գինակցին, լսելով նրանից խօսքեր հոգեսփոփ, հաստատող այն «հեռաւոր քաղցրիկ փփրուի, որն ակետում էր Փեսայի գալուստը»: Այդ սպասուած գալուստի այլաբանական պատկերում Թերեզան տեսնում էր իր մահը, որն իր մօտաւոր լինելը փաստել էր 1896ի Ապրիլի 3ին՝ Աւագ Ուրբաթ օրը տեղի ունեցած առաջին արիւնաթքմամբ:

Քոյր Մարիան, Թերեզայի բարի կնքամայրը, համոզուած՝ որ Աստծուն այդքան սիրահար իր դստրիկը շուտով թողնելու է իրենց եւ ճախրելու է դէպի ասիերն յաւիտենական, նրան ուղղում է մի նամակ, որում խնդրում է մասնակից դարձնել իրեն այն շնորհներին, որոնցով Թերեզան ողողուել էր իր վանական Ուխտադրութեան տարեդարձին կապուած հոգեւոր կրթութեան օրերին, Սեպտ. 8ը իր մէջ ներառնող շաբաթուայ ընթացքում. շնորհներ, որոնց մասին խօսել էր Սրբուհին իր քրոջ հետ, իրենց հազուադէպ գրոյցներից մէկի ընթացքում: «Խնդրեցի իրենից ես ինքս, – վկայում է Մարիան 1910ին, – իր վերջին հոգեւոր կրթութեան ընթացքում (1896), գրաւոր կերպով շնորհել ինձ այն՝ ինչ անուանում էի իր փոքրիկ ուսմունքը: Նա գիշեց»:

Քոյր Մարիայի 13 Սեպտ. 1896 թուակիր նամակը լի է ձեռագրի գրման պատճառների շուրջ տեղեկութիւններով. «Գրում եմ ձեզ ո՛չ որովհետեւ ինչ որ մի բան ունեմ ասելու, այլ որպէսզի ինչ որ մի բան ստանամ ձեզնից, որ այնքա՛ն մօտ էք Աստծուն եւ իր փոքրիկ առանձնաշնորհեալ հարսնացուն էք, որին յայտնում է եւ վստահում իր գաղտնիքները: Ա՛հ, քանիցս քաղցր են

Յիսուսի կողմից Թերեզային յայտնուած գաղտնիքները, եւ ես կ'ուզէի կրկին ունկնդրել դրանք: Գրէ՛ք ինձ մէկ խօսք միայն. թերեւս ձեր վերջին հոգեւոր կրթութիւնն է, որովհետեւ Յիսուս թւում է բաւական շահագրգիռ՝ քաղելու իր ոսկեգօծ ողկոյզը»: Ինքը նոյնպէս կամենում է «հրահանգուել սիրոյ գիտութեան մէջ», յայտնում է «սիրոյ եւ վստահութեան փոքրիկ ճանապարհի շուրջ» Սրբուհու մտքերի մի գրաւոր ամփոփում ունենալու իր փափաքը եւ նամակի վերջում նաեւ աւելացնում է – Թերեզայի հնարաւոր բոլոր վարանումները փարատելու նպատակով – որ Մեծաւորուհի Մայրը, մայր Մարիամ Գոնձական, արտօնել է արդէն պատասխանը: Բիշ օրեր անց, Սեպտ. 16ից առաջ (որովհետեւ այդ օրը Մարիան կրկին նամակ է գրում եւ շնորհակալութիւն յայտնում ստացած եւ արդէն ընթերցած էջերի համար), Թերեզան իր քրոջն է յանձնում խնդրուած գրութիւնը, «Յիսուսի եւ Թերեզայի գաղտնիքների հռչակմանը» կցելով մի նախաբան, որում քոյր Մարիան կարող էր կարգալ խօսքեր՝ ի զօրու հեռացնելու իրենից բոլոր երկիւղները. «Ա՛հ, եթէ բոլոր թոյլ ու անկատար հոգիները զգային այն՝ ինչ զգում է նրանցից ամենափոքրը՝ հոգին ձեր Թերեզայի, չէին յուսահատուի եւ չէին հրաժարուի սիրոյ լեռան գագաթն հասնելու իրենց փափաքից: Այո՛, որովհետեւ Յիսուս չի պահանջում մեծամեծ գործեր, այլ միայն ու միայն վստահութիւն եւ երախտագիտութիւն»:

Մինչ այս նախաբանը չի կրում շարադրման ճշգրիտ թուականը (Սեպտ. 1896), երկրորդ մասը, որն ինքնակենսագրական Երկրորդ Ձեռագրի էական մասն է, գրուած՝ Յիսուսի հետ զրոյցի ձեւով, կրում է իր սկզբնաւորութեանը «8 Սեպտ. 1896» թուագրութիւնը: Հաշուի առնելով, սակայն, այն հանգամանքը, որ քոյր Մարիան Սեպտ. 13ին է, որ ուսուցումներ է խնդրում Թերեզայից սիրոյ ճանապարհի վերաբերեալ, թւում է՝ թէ Սրբուհին տուել է նամակին իր վանական Ուխտադրութեան թուականը, եւ ոչ թէ ճշգրիտ նշումն այն օրուայ՝ որում գրել է իր պատասխան նամակը: Այսպիսով կամեցել է թերեւս մի կապ ստեղծել ստացած շնորհների եւ Յիսուսի հետ իր միութեան օրուայ միջեւ, թողնելով այն տպաւորութիւնը՝ որ Յիսուս այդ շնորհները տուել է իրեն որպէս նուէր, այդ ուրախալի օրուայ տարեդարձի կապակցութեամբ. «Ո՛վ Սիրելի իմ, այս պարգեւը միայն նախերգանքն էր այն աւելի մեծ շնորհների, որոնցով կամեցար ճոխացնել ինձ: Թող, Սէր իմ միակ, որ յիշեմ դրանք այսօր ... այսօր՝ մեր միութեան փեցերորդ տարեդարձի օրը»: Հիմնաւոր է նաեւ այն նկատողութիւնը, որ նամակի առաջին մասը, նախաբանը, գրուել է վերջում, հիմնական մասը աւարտին հասցնելուց յետոյ:

Մի կողմ թողնելով, սակայն, ժամանակագրական հարցերը, վերադառնանք Սրբուհու ձեռագրին: Խօսքը վերաբերում է քառակուսի գծուած եւ երկուսի ծայրուած երեք թերթերի, որոնք միասին կազմում են մի փոքրիկ տետրակ, որի առաջին տասը էջերն են միայն գրուած: Շարադրուած է մանր տառերով, այն աստիճան՝ որ իւրաքանչիւր էջի վրայ կարելի է հաշուել 46 տող: Ձեռագիրն ուսումնասիրողների կարծիքով, այն «շարադրուել է ծայրագոյն հապճեպութեամբ եւ ի գին մեծ ջանքերի»: Եւ այնուամենայնիւ, իր գրութիւններից ոչ մէկում որքան սրանում, Թերեզան չի ներդրել իր հոգին, յայտնելով ծալքերն ամենախորին, սիրոյ «գաղտնիքները», որոնցով Յիսուս հեղեղել էր իր հոգին:

Մխիթարական երազը պատմելուց յետոյ, որին արդէն ակնարկել էր, խօսում է մարտիկի, քահանայի, առաքեալի, վարդապետի, մարտիրոսի կոչումների մասին, որոնք զգում է իր հոգու խորքում կարմեղականի, Յիսուսի հարսնացուի եւ հոգիների մօր կոչումների հետ միասին, ասելով՝ թէ վերջապէս հասկացել է – Պօղոս Առաքեալի Կորնթացիներին ուղղուած առաջին նամակը ընթերցելով եւ նրա շուրջ

խորհրդածելով – որ այդ բոլոր կոչումները միաւորուում են եւ իրագործուում այն կոչման մէջ, որը զգում է իրեն բնորոշն ու իւրայատուկը, աւելի ճիշտ՝ հոգեհարազատը: Մէրը: Հետեւաբար, կարող է բացականչել. «Եկեղեցու՝ իմ սիրելի Մօր սրտում ես կը լինեմ Մէրը»: Իսկոյն նկատուում է իր փոքրկութիւնն ու անուժութիւնը՝ մի նմանօրինակ գործի համար, բայց չի վախենում Սիրոյն որպէս զոհ նուիրուելուց, որպէսզի կրակի գոյափոխի իր ոչնչութիւնը, եւ օգնութեան է կանչում նաեւ բոլոր երկնաբնակներին, խնդրելով նրանց ոգին՝ եւ ոչ թէ փառքը: Իր փառքը չի լինելու ուրիշ ոչինչ, եթէ ոչ միայն անդրադարձը իր Մօր՝ Եկեղեցու փառքի, որի դուստրն է զգում իրեն: Քանի որ փոքր է, զբաղուելու է Աստուծոյն փոքրիկ զոհողութիւնների ծաղիկներ նուիրելով եւ Սիրոյ տաղը ներբողելով միայն, գուարթութիւն պարգեւելով Յաղթական Եկեղեցուն, օգնելով Տառապող եւ Ուղեւոր Եկեղեցիներին: Սիրահարուած է իր Մօրը՝ Եկեղեցուն, եւ գիտէ՝ որ մաքուր սիրոյ մէկ ներգործութիւնը նրան աւելի օգտակար է՝ քան միւս բոլոր գործերն ի միասին: Սրանց հետ մէկտեղ, վիթխարի փափաքները շարունակուում են ծնել իր մէջ ամենամեծն ընդմէջ բոլոր մարտիրոսութիւնների, եւ յատկապէս փափաքը՝ սիրելու իր «առաջին եւ միակ Մտերիմին», «միմիայն» որին է Թերեզան կամենում սիրել: Յիսուս: Բայց ինչո՞ւ են այս արծուային ներշնչումները բխում իր մէջ, իր՝ որ մի փոքրիկ թռչնակ լինելով, չունի արծուային ոչինչ, եթէ ոչ միայն աչքեր եւ սիրտ: Նկատուում է, որ այնքան էլ կարեւոր չէ իր փոքրիկ թեւերի տկարութիւնը, որոնք դե՛ռ աւելին՝ թրջուած են, եւ որ հնարաւորութիւնը չունի սաւառնելու դէպի Արեւը: Բայց դէպի այդ Արեւը նա կարող է յառել իր հայեացքը, եւ վստահ է՝ որ դառնալու է որսը այն Արծուի, որին տեսնում է Սիրոյ Արեւի կենտրոնում, եւ որ կարողանալու է նոյն իր՝ աստուածային Արծուի թեւերով ճախրել դէպի Սիրոյ հնոցը՝ դէպի յաւիտենական միութիւնը Ամենասուրբ Երրորդութեան հետ: Ձեռագրի բոցավառ էջերն աւարտուում են բոլոր փոքրիկ հոգիներին Յիսուսի ներողամտութիւնն ու սէրը յայտնելու փափաքի արտայայտութիւններով, Յիսուսի՝ որին Թերեզան խնդրում է խոնարհեցնել Իր աստուածային հայեացքը փոքրիկ հոգիների մի մեծ բազմութեան վրայ, աղաչում է ընտրել փոքրիկ զոհերի մի զօրախումբ՝ արժանի Իր սիրոյն:

Մինչ անցեալում այս գրութիւնը կցուել էր – ո՛չ սակաւ աղաւաղումների ենթարկուելով – Ինքնակենսագրական Երրորդ Ձեռագրին, դառնալով Մի Կեանքի Պատմութեան տասնմէկերորդ գլխի բաղկացուցիչ մասերից մէկը, այժմ գալիս է ներկայանալու իր բնածին կերպարանքով, նաեւ երախտագիտութեան մի ակամայ զգացում ծնելով մեզնում հանդէպ քոյր Մարիայի, որը խոնարհաբար խնդրեց, ստացաւ եւ մեզ թողեց այս անգին հարստութիւնների գանձարանը:

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՁԵՌԱԳԻՐԸ

1896ին մայր Մարիամ Գոնձակայի Մեծաւորուհի ընտրուելուց յետոյ ազատուելով իր պաշտօնից, մայր Ագնէս Յիսուսին կարողացաւ – ինչպէս արդէն ասուեց – ընթերցել Թերեզայից պահանջած գրութիւնը: Իր «դասեր» յուշատետրից զոհ լինելով հանդերձ, նա բաւական վշտացած էր, որովհետեւ այդ յուշերը սահմանափակուում էին քիչ թէ շատ մանկութեան եւ պատանեկութեան օրերում, առանց խօսելու Թերեզայի վանական կեանքի մասին: Բայց միւս կողմից, նա, 1895ի ձմեռնային այն երեկոյեան, միաբանակիցների համախմբման սենեակի վառարանի մօտ, հրամայել էր նրան գրել միայն սա: Եւ Սրբուհին կատարել էր հնազանդութեան

իր գործը, վստահ՝ որ պարզապէս ընտանեկան քաղցր յուշեր էր նուիրում իր քոյրերին:

Բայց այժմ իրողութիւնները փոխուում էին: Մայր Ազնէս Յիսուսին միշտ աւելի ու աւելի էր համոզուում երիտասարդ կարմեղուհու սրբութեանը. այս վերջինս, ընդմէջ հիւանդութեան տառապանքների, ցուցաբերում էր մի զարմանահրաշ հերոսութիւն, միշտ պահպանելով հանդերձ աւետարանական մանկութեան իր պարզ բնականութիւնը: Թերեզայի հիւանդութիւնն ու ոչ այնքան հեռու թուացող մահը ահազանգում էին եւ մտահոգում իրեն, որ արդէն մտածում էր – մեր բառամթերքն օգտագործելով – «ժողովրդականացնել», «հռչակել» Թերեզայի պատգամը: Բայց այլեւս մեծաւորուհի չէր, հետեւաբար՝ չէր կարող հրամայել Թերեզային շարունակել յուշագրութիւնը: Եւ ահա այն քայլը, որ կատարում է մայր Ազնէս Յիսուսին, իր իսկ խօսքերով ներկայացուած. «Քոյր Թերեզայի գրութիւնը գտնում էի անաւարտ: Նա, ինչպէս ես ինքս հրամայել էի, սահմանափակուել էր միայն մանկութեան եւ պատանեկութեան յուշերի շարադրումով, հազիւ մի քանի խօսք ասելով իր վանական կեանքի վերաբերեալ: Յաւուում էի, որ չէր շարունակել եւ միեւնոյն ընդարձակութեամբ թղթին չէր յանձնել վանական շրջանում տեղի ունեցած դէպքերն ու ստացած շնորհները: Բայց այդ օրերին ես արդէն դադարել էի մեծաւորուհու պաշտօնը զբաղեցնելուց եւ ընտրուել էր մայր Մարիամ Գոնձական: Վախենալով, որ նա գործին չէր տայ այն նոյն կարեւորութիւնը, որ տալիս էի ես, չէի համարձակուում խօսել այս հարցի շուրջ: Վերջում, սակայն, տեսնելով որ քոյր Թերեզայի վիճակը գնալով վատթարանում էր, կամեցայ փորձել անհնարինը: 1897ի Յունիսի 2ի երեկոյեան, քոյր Թերեզայի մահից չորս ամիս առաջ, կէսգիշերին մօտ բախեցի մեր Մեծաւորուհի Մօր դուռը: ”Մայր իմ, – ասացի, – չեմ կարողանում քուն մտնել առանց ձեզ մի գաղտնիք յայտնելու: Իմ մեծաւորութեան շրջանում, քոյր Թերեզան գրի էր առել իր մանկութեան յուշերը, ինձ հաճոյք պատճառելու համար եւ յանուն հնազանդութեան: Վերջնապէս զրանք երկու օր առաջ. գեղեցիկ են, բայց ձեզ ոչնչով չեն ծառայի, իր մահից յետոյ, դամբանական կոնդակը գրելու համար, որովհետեւ գրեթէ ոչինչ չկայ իր վանական կեանքի վերաբերեալ: Եթէ դուք հրամայէիք, նա կը կարողանար գրել առաւել լուրջ մի բան, եւ չեմ կասկածում թէ ձեր ունեցածն անհամեմատելիօրէն աւելի գերազանց կը լինէր՝ քան իմը”: Աստուած օրհնեց իմ փորձը, եւ յաջորդ առաւօտեան Մեծաւորուհի Մայրը քոյր Թերեզային հրամայեց շարունակել իր պատմութիւնը: Ես արդէն պատրաստել էի մի տետր, բայց նա չափազանց գեղեցիկ գտաւ այն ... : Վախենում էր գործել ընդդէմ աղքատութեան ուխտի, օգտագործելով այն: Հարցրեց ինձ՝ թէ չէ՞ր կարող արդեօք սեղմել տողերը, քիչ թուղթ օգտագործելու նպատակով: Պատասխանեցի, որ շատ հիւանդ էր՝ այդպիսի նեղութեան իրեն ենթարկելու համար, եւ որ պարտաւոր էր, ընդհակառակն, ընդարձակել տողերի միջեւ ընկած տարածքը եւ գրել խոշոր տառերով»:

Մայր Ազնէս Յիսուսին կանխաւ նախապատրաստուել էր մերժման, եւ կարելի է պատկերացնել իր հոգեւոր տուայտանքները, մինչ չէր համարձակուում անհրաժեշտ հրամանը խնդրել մեծաւորուհուց եւ միաժամանակ զգում էր խղճի մի խայթ, գրեթէ մի պարտականութիւն, մոռացումից փրկելու Թերեզայի կեանքն ու աստուածսիրութիւնը: Նրա կողմից հետագայում արտասանուած հետեւեալ խօսքերը, ուղղուած իրեն իսկ Թերեզային, փաստում են իր այս հոգեվիճակը. «Աստուածամայրն ինձ հասկացրեց, որ Սրբերի բոլոր կենսագրութիւնները, նոյնիսկ ամենագեղեցիկները, համահաւասար արժէքը չունեն ինքնամերժման ու հնազանդութեան մէկ գործի համեմատութեամբ: Նոյնիսկ եթէ մեր Մայրը մահից յետոյ պատուի յուշագրութիւնդ,

Թևում է ինձ, որ եթէ գտնուեմ այս երեկոյեան միեւնոյն տրամադրութիւններս մէջ, Երկնքի հանդէպ մի սուսել վառ հրապոյր միայն կը գգամ: Կը ճախրեմ է՛լ աւելի վեր, ահա այսքանը միայն»: Խօսքերն համարձակ են. եթէ յայտնում են՝ թէ որքան էր Աստծուն յանձնուած մայր Ագնէս Յիսուսին, յայտնում են նաեւ՝ թէ ինչպիսի կարծիք եւ մեծարանք ունէր Թերեզայի «կենսագրութեան» վերաբերեալ:

Թերեզան անցնում է գործի: Հիւանդ է, Յունիս ամսուայ մէջ տառապում է բարձր ջերմաստիճանից ու շնչահեղձութիւնից: Աշխատում է այն սակաւաթիւ ազատ ընթացքում, որոնցում հանգիստ է գտնում բարի միաբանակիցների այցելութիւններից: Եւ ձեռագրի 17րդ էջի վրայ է, որ Թերեզան յայտնում է այս իրողութիւնը, խոստովանելով՝ որ բարեհոգի միաբանակիցների յաճախակի այցելութիւնների հետեւանքում գրիչը ծանրացել է, չկարողանալով գրել այն՝ ինչ կատարուել ու կատարուում է իր հոգու խորքում: «Որպէսզի կարողանամ շարադրել մտքերս, հարկ է՝ որ լինեմ միայնակ ճնճողուկի պէս, ինչը ինձ շատ հագուադէպ է պատահում: Հագիւ եմ ձեռքս վերցնում գրիչը, ահա յայտնում է մի բարի քոյր, որ եռաժանին ուսին՝ անցնում է մօտովս: Մի քանի փոքրիկ շատախօսութիւններ կազմակերպելով, աշխատում է հանգստացնել ինձ մտքերիցս. հաւաքելիք յարդը, բաղերը, հաւերը, բժշկի այցելութիւնը ... : Ճիշտն ասած՝ շատ երկար չի տեւում, բայց բարի տրամադրուած քոյրերը վանքում մէկից աւելի են եւ ահա մի ակնթարթ անց՝ խոտի հաւաքումը ստանձնած քոյրերից մէկը ծնկներս է դնում ծաղիկների մի փունջ, այդպիսով համարելով, թերեւս, ներշնչել ինձ բանաստեղծական մտքեր: Ես, որ այս պահիս դրանց կարիքը չունեմ, կը նախընտրէի՝ որ այդ ծաղիկները շարունակէին օրօրուել իրենց ցօղունների վրայ: Վերջիվերջոյ, այս հուշակաւոր տետրը բացել փակելուց յոգնած, բացում եմ մի գիրք (որը նոյնպէս չի կամենում երկար ժամանակ բաց մնալ) եւ աներկիւղ ասում եմ՝ որ տողեր եմ արտագրում Սաղմոսներից ու Աւետարանից, մեր Մօր սօնի համար: Սա կատարեալ ճշմարտութիւն է, որովհետեւ մէջբերումների խնայողութիւն չեմ անում: Մայր իմ, բաւական զուարճացրի ձեզ, կարծում եմ, պատմելով Կարմեղոսի արահետներում պատահած բոլոր արկածներս. չգիտեմ, թէ կարողացա՞յ արդեօք տասը տող գրել առանց խանգարուելու: Այս հանգամանքը չպէտք է ժպիտ պատճառէր ինձ, եւ ո՛չ էլ զուարճացնէր, բայց ի սէր Աստծոյ եւ իմ քոյրերի (որոնք այսքա՛ն սիրալի են իմ հանդէպ), աշխատում եմ գոհունակ դիմագծեր ունենալ եւ յատկապէս՝ լինել այդպիսին ... : Ահա ինձնից հեռանում է յարդի հաւաքամբ զբաղող քոյրերից մէկը, ցաւակցող ձայներանդով այս խօսքերն ասելուց յետոյ. "Խեղճ քոյրիկ, բաւական յոգնում ես ամբողջ օրը գրելով": "Հանգիստ եղիր, - պատասխանեցի, - թևում է՝ թէ շատ եմ գրում, մինչ իրականում չեմ գրում գրեթէ ոչինչ": "Աւելի լաւ, - շարունակեց խրախուսուած դէմքով, - բայց միեւնոյնն է, ես գոհ եմ այստեղ լինելու համար, կարող եմ մի քիչ ցրում պարգեւել քեզ": Եւ իրօք, սա իմ համար մի այնքան մեծ ցրուածութիւն է (չհաշուած հիւանդապահ քոյրերի այցելութիւնները), որ չեմ կեղծում ասելով՝ թէ չեմ գրում գրեթէ ոչինչ»:

Սրբուհու խօսքերն իրենց հաստատումն են գտնում նաեւ մայր Ագնէսի վկայութիւններից մէկում. «Իր կեանքի վերջում, երբ արդէն շատ հիւանդ էր, (Թերեզան) նստում էր պարտէզում եւ ջանում աւարտին հասցնել ձեռագիրը. մի օր նկատեցի, որ քոյրերն ամէն ըրպէս այցելում էին իրեն ու խափանում աշխատանքը: Ինքը, սակայն, վրդովուելու կամ ազնուօրէն իրեն հանգիստ թողնել խնդրելու փոխարէն, վար էր դնում գրիչն ու փակում տետրը, մի քաղցրիկ ժպիտով: Հարցրեցի՝ թէ ինչպէ՞ս էր կարողանում շարադրել մտքերը, եւ այդպիսի վիճակում՝ չկորցնել

համբերութիւնը: Պատասխանեց. «Գրում եմ եղբայրական սիրոյ մասին. պատե՛հ առիթն է, որ ես նոյնպէս գործադրեմ այն: Մայր իմ, երկրի վրայ եղբայրսիրութիւնն ամէն ինչ է իւրաքանչիւր անձի աստուածսիրութեան չափը յայտնի է դառնում իր գործադրած եղբայրսիրութեան ուժգնութեամբ»:

Եղբայրսիրութիւն, կամ աւելի ճիշտը՝ մարդասիրութիւն. ահա՛ երրորդ ձեռագրի առանցքային նիւթը, Սրբուհու կտակը:

Սէրը, «միակ բարիքը՝ որ փափաքում էր ունենալ», եւ որն իր «բաղձանքն» էր, այն սէրը՝ որն «իր հոգում ծնուել էր մանկութիւնից ի վեր, աճել իր հետ եւ վերածուել այլեւս մի անյատակ անդունդի, որի խորութիւնը չէր կարողանում չափել», այդ սէրն այնքան էր ընդարձակուել, որ իր հոգում հանգցրել էր «միւս բոլոր փափաքները, բացի այն մէկից. սիրել՝ սիրուց մեռնելու աստիճան»: Անբնական չէ, որ Յիսուսից ստանալով «դէպի սիրոյ խորհրդաւոր խորքերը ներթափանցելու շնորհը», կամենում է այժմ իր «մանկական թոթովանքով» հռչակել դրանք, թէեւ զգում է ամբողջ դժուարութիւնը: Դողացող ձեռքը դանդաղեցնում է աշխատանքը, գրիչը սկսում է ծանր թուալ Սրբուհուն. եւ իրօք, ձեռագրի վերջին մէկուկէս էջերը – ինչպէս նաեւ Յուլիսի 13ից յետոյ գրուած բոլոր նամակները – գրուած են մատիտով, ուժերի չափազանց սպառման հետեւանքով: Բայց սիրոյ լիութեամբ ճոխացած սիրտը չի կարողանում իր մէջ պահել այդ յորձանքը. այն պէտք է արտայայտուի: Եւ այս կնիքով են դրոշմուած ձեռագրի վերջին տողերը. «Զգում եմ, որ եթէ խղճիս վրայ ունենայի հնարաւոր բոլոր մեղքերն անգամ, կը գնայի՝ զղջումով տրորուած սրտով նետուելու Յիսուսի գիրկը, որովհետեւ գիտեմ՝ թէ Նա որքան է սիրում իր մօտ վերադարձող անառակ որդուն: Իր նախախնամ ողորմութեամբ անձս մահացու մեղքից ազատելու համար չէ՝ որ դէպի Ինքն եմ ընթանում վստահութեամբ ու սիրով»:

Երրորդ ձեռագիրը, ինչպէս նախորդ երկուսը, աւարտուում է սիրոյ կնիքով, «սէր» բառով: Հիւանդութեան տառապանքները կրող երիտասարդ միանձնուհու կողմից դրուած դրոշմն է «չափազանց գեղեցիկ» տետրի վրայ – սեւ կազմով եւ քառակուսի գծուած թղթի էջերով մի տետր, որ աւելի նմանում է տետրի՝ քան այդպիսին է իրականում – որի 36 գրուած էջերն աւելի խոշոր տառերով չեն գրուած՝ քան 1895 թուականին մայր Ագնէս Յիսուսի հրամանով գրուած տողերը: Միշտ նոյն հապճեպ գրուած մանրիկ տառերն են, եւ ապարդիւն է լուսանցքներ փնտուելը ձեռագրում մի միանձնուհու, որն իր կողմից ուխտուած աղքատութեան այնքա՛ն կենդանի զգացումն ունէր:

Սրբուհին այլեւս քաջատեղեակ էր, որ իր գրութիւնները ապագային հրատարակուելու էին եւ իրեն ծանօթացնելու էին Կարմեղոսի պարիսպներից եւ ընտանիքի սահմաններից դուրս: Մայր Ագնէս Յիսուսին, 1915ի Յուլիսի 15ին տուեց հետեւեալ վկայութիւնը, որ կարեւոր է այս առումով. «Երբ այլեւս մօտ էր մահուանը, (թերեզան) մեծ կարեւորութիւն էր տալիս (ինքնակենսագրութեան) հրատարակմանը, սեանելով նրանում իր առաքելութիւնը կատարելու մի միջոց: Մի օր, վստահաձայն ասաց. ”Մահիցս յետոյ պէտք է անյապաղ հրատարակէք ձեռագիրը: Եթէ ուշացնէք, կամ անխոհեմութիւնն ունենաք նրա շուրջ խօսելու այլոց հետ – բացառութեամբ մեր Մեծաւորուհի Մօր – սատանան գործի կը դնի հազար ու մի խաբէութիւններ՝ խափանելու համար այս հրատարակումը, որը սակայն շատ կարեւոր է: ... Աշխատեցէք առանց հնարաւոր դժուարութիւններից վախենալու: Ինչ

վերաբերում է իմ առաքելութեանը, նրանում – ինչպես Սրբուհի Ժաննա դ'Արքի պարագային – Աստուծոյ կամքը կը կատարուի՝ հակառակ մարդկային բոլոր նախանձներին՝: "Կարծում ես, ուրեմն, որ ձեռագրերի միջոցով է, որ բարիք կը գործես հոգիների համար": "Այո՛, դա է այն միջոցը, որով Աստուած կ'իրագործի բոլոր փափաքներս: Կը բարեգործի բոլոր հոգիներին, բացառութեամբ նրանց՝ ովքեր ընթանում են ընդմէջ արտասովոր ճանապարհներին": "Իսկ եթէ Մեծաւորուհի Մայրը այրի՞ այն": "է լաւ, դրանով չեմ մտահոգուի: Պարզապէս կը մտածեմ, որ Աստուած կ'իրագործի փափաքներս մի այլ ճանապարհով":»:

Այս երկխօսութիւնը ակնյայտ է դարձնում թէ Սրբուհին որքան գիտակից էր ձեռագրերի ապագայ հրատարակմանը, ինչպէս նաեւ՝ թէ որքան մեծ կարեւորութիւն էր տալիս այդ գործին, հարցին մօտենալով առաքելական իր վիթխարի փափաքների տեսանկիւնից: Ձեռագրի բովանդակութիւնը առաջին երկու գրութիւնների հետ համեմատելով – որոնց շարադրման ժամանակ Թերեզան դեռ չէր մտածում դրանց ժողովրդականացման մասին – ինչպէս նաեւ նամակների հետ բաղդատելով գտնում ենք՝ թէ քանիցս ճշմարիտ են մայր Ազնէս Յիսուսի կողմից փրոյիչեալ գրոյցին կցուած խօսքերը. «Գիտակցութիւնը, որ իր գրութիւնները ապագայում հրատարակուելու էին, ոչնչով չի կողակարել Թերեզայի միտքը եւ մեղմացնելով չի եղանակաւորել նրա պարզութիւնն ու ինքնաբերութիւնը: Այստեղ, ինչպէս եւ առաջին երկու գրութիւններում, նա բացայայտում է իր հոգու հուշիւնը»: Եւ անտեղի են ոմանց ընդդիմութիւնները, որոնք աշխատում են խոնարհութեան պակաս գտնել այս խօսքերում:

Պատմութիւնը փաստել է եւ դեռ շարունակում է ապացուցել՝ թէ որքան հեռատես էր – իրեն լուսաւորող վերին լոյսի ներքոյ – մահամերձ «փոքրիկ» միանձնուհին, եւ դէպքերի իրականութիւնը ամէն օր ընդգծում է մարգարէական ճշմարտութիւնն ու անխաբուելիւնը՝ շնորհառատ այն «Առաքելութեան» վերաբերեալ, որ նախկին Մի Կեանքի Պատմութեան իններորդ եւ տասներորդ գլուխները, ներկայիս ինքնակենսագրական Երրորդ Ձեռագիրը նպաստաւոր կերպով կատարել են եւ շարունակում են կատարել:

## ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

«Վերջին Խօսքը» տիտղոսագրով, 1926ին Լիզէոյի Կարմեղոսը հրատարակում էր մի փոքրիկ գրքոյկ, որն իրենում բովանդակում էր «Յիսուս Մանկան Սրբուհի Թերեզայի վերջին խօսքերը», որոնք 1897ի Մայիս–Սեպտեմբեր ամիսներին մայր Ազնէս Յիսուսին գրի էր առել օրէցօր:

Լիզէոյի հրատարակութիւնը, սակայն, ամբողջական չէր եւ գերծ չէր այն ուղղումներից ու հպումներից, որոնք Սրբուհու քոյրն այլեւս վարժ էր կատարել իր «դատեր» գրութիւնների վրայ: Թերեզայի ծննդեան հարիւրամեակի առիթով էր միայն, որ Լիզէոյի Կարմեղոսը պատրաստեց եւ հրատարակեց Սրբուհու «վերջին խօսքերի» քննական բնագիրը, որոնք առաւել կենդանի գոյներով են ցոլացնում երիտասարդ կարմեղուհու հոգին, ընդմէջ այն վեհ ներշնչումների ու փափաքների, որոնք գալիս են մէկ անգամ եւս հաստատելու իր հոգեկանութեան առանցքային գիծը, այն է՝ պարզութեամբ եւ ուրախութեամբ ամբողջական անմնացորդ ինքնանուիրում Յիսուսին եւ, ընդմէջ Յիսուսի, մերձաւորին: Եւ ինչպէս ինքնակենսագրական ձեռագրերի, այնպէս էլ այս էջերի ընթերցումով յստակում է՝

*Թէ որքան սեղին են ասուած Հռոմի Սրբազան Քահանայապետ Պօղոս Վեցերորդի խօսքերը. «Սրբուհի Թերեզան վկան է քրիստոնէական հոգեգուարթութեան»:*

*Արդ ներկայացուող էջերը շատ մօտ են վերոյիշեալ քննական հրատարակմանը. սա այն բնագիրն է, որի փրաբերեալ մայր Ագնէս Յիսուսին հանդիսաւոր երգում տուեց 1910 թուականին:*

*Ինչպէս շատ պարզ կերեւայ ընթերցման պահին, նախկին Մի Կեանքի Պատմութեան տասներկուերորդ գլուխը այս էջերում է գտնում իր հիմնական աղբիւրը: Առանց հարկն ունենալու որեւէ բացատրութեան կամ մեկնաբանման, Սրբուհու երկրային փերջին օրերի ընթացքում արտասանուած այս խօսքերը տալիս են վրձնի մի յետին հպում – հպումը շնորհի – Թերեզայի վաւերական կերպարին, մեզ ընծայուած՝ Ինքնակենսագրական Ձեռագրերի կողմից:*

*Սրանք հոգեւոր մտքեր են ամենագանազան հարցերի շուրջ, ինչպէս ճշգրտումներ, յանձնարարումներ, աղօթքներ: Թէեւ չի խօսուում Սրբուհու իսկ ձեռքով շարադրուած գրութեան մասին, թուում է՝ թէ կարելի է ներկայացնել այն որպէս հաւասար ինքնակենսագրական ձեռագրերին եւ որպէս դրանց վերջաբան:*



**ՅԻՍՈՒՄ ՄԱՆԿԱՆ ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԱՅԻ  
ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ՍՐԲԱԴԱՍՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՈՂ  
ԿԱՐԵՒՈՐ ՏԱՐԵԹՈՒԵՐ**

- 1873 2 ՅՈՒՆՈՒԱՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. *Սրբուհու ծնունդը Ալանսոնում.*  
4 ՅՈՒՆՈՒԱՐ, ՇԱԲԱԹ. *Մկրտութիւնը Ալանսոնի Սուրբ Աստուածածին եկեղեցում, Մարիա Տրանչեսկա Թերեզա անուամբ.*  
29 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ. *Մանուկը յանձնուով է դայեակի խնամքին.*
- 1874 2 ԱՊՐԻԼ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. *Փոքրիկի վերջնական վերադարձը հայրական տուն.*
- 1877 28 ՕԳՈՍՏՈՍ, ԵՐԵՔՇԱԲԹԻ. *Մօր մահը.*  
29 ՕԳՈՍՏՈՍ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. *Թերեզան իր քոյր Փօլինին ընտրում է որպէս երկրորդ մայր.*  
16 ՆՈՅՏԵՄԲԵՐ, ՈՒՐԲԱԹ. *Մարթինների ընտանիքը տեղափոխուով է Լիզէոյ.*
- 1879 ՏԱՐՈՒԱՅ ՎԵՐՁՈՒՄ. *Թերեզայի առաջին խոստովանանքը.*
- 1880 Հօր հիւանդութիւնը գուշակող մարգարէական տեսիլքը.
- 1881 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. *Թերեզայի մուտքը Լիզէոյի Բենեդիկտեան մայրապետների վարժարան.*
- 1882 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. *Փօլինը մտնում է Լիզէոյի Կարմեղոս.*  
ՏԱՐՈՒԱՅ ՎԵՐՁՈՒՄ. *Թերեզան սկսում է տառապել մի շարունակական գլխացաւից.*
- 1883 ՄԱՐՏԻ ՎԵՐՁԱՒՈՐՈՒԹԵԱՆ, ՉԱՏԻԿԻ ՄՕՏ. *Անկողին է ընկնում ծանրօրէն հիւանդ.*  
13 ՄԱՅԻՍ, ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ ԿԻՐԱԿԻՆ. *Աստուածամօր ժպիտը եւ հրաշալի բժշկութիւնը.*
- 1884 8 ՄԱՅԻՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. *Թերեզայի առաջին Հաղորդութիւնը Բենեդիկտեան մայրապետների վանքում, եւ վանական Ուխտադրութիւնը քոյր Ագնէս Յիսուսի (Փօլինի) Կարմեղոսում.*  
22 ՄԱՅԻՍ, ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ. *Սրբուհու երկրորդ Հաղորդութիւնը.*  
14 ՅՈՒՆԻՍ, ՇԱԲԱԹ. *Դրոշմը, որ ստանում է Լիզէոյի եպիսկոպոսի ձեռքով.*
- 1885 21 ՄԱՅԻՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. *Առաջին Հաղորդութեան առաջին տարեդարձի տօնումը.*
- 1886 ՄԱՐՏ. *Թերեզան թողնում է վարժարանը.*  
31 ՄԱՅԻՍ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. *Թերեզան ընդունուով է "Մարիամի Որդիներ" Ընկերութիւն.*  
15 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՈՒՐԲԱԹ. *Սրբուհու մեծ քրոջ՝ Մարիայի մուտքը Լիզէոյի Կարմեղոս.*  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՁՈՒՄ. *Իր երկնային եղբայրների բարեխօսութեամբ, Թերեզան բժշկուով է խղճահարուսթիւնների հիւանդութիւնից.*  
25 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՇԱԲԱԹ. *Սուրբ Ծննդի օրը ստացած շնորհը, որը Թերեզան կոչում է "իմ դարձը".*

- 1887 29 ՄԱՅԻՍ, ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻՆ. Թերեզյան հօրից խնդրում է թոյլատրել իր մուտքը Կարմեղոս 15 տարեկան հասակում.
- ՅՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐԻՆ, ՄԻ ԿԻՐԱԿԻ. Հոգիների փրկութեանը ծառայելու եռանդի շնորհը, որ ստանում է խաչուած Յիսուսի պատկերներից մէկը դիտելիս.
- 31 ՕԳՈՍՏՈՍ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. Փռանցիների դարձը, ստացուած՝ Սրբուհու աղօթքների միջոցով.
- 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Այցելութիւնը Լիզէոյի եպիսկոպոսին, խնդրելու համար վաւերացնել իր մուտքը Կարմեղոս.
- 4 ՆՈՅՏԵՄԲԵՐ, ՈՒՐԲԱԹ. Մեկնումը Լիզէոյից Հռոմ եւ այցելութիւնը Փարիզի Notre-Dame des Victoires սրբավայր.
- 20 ՆՈՅՏԵՄԲԵՐ, ԿԻՐԱԿԻ. Նորին Սրբութիւն Լեւոն Տասներեքերորդ Քահանայապետի մօտ ընդունելութիւնը.
- 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՈՒՐԲԱԹ. Վերադարձը Լիզէոյ.
- 1888 1 ՅՈՒՆՈՒԱՐ, ԿԻՐԱԿԻ. Թերեզյան թոյլտուութիւն է ստանում մտնելու Լիզէոյի Կարմեղոս.
- 9 ԱՊՐԻԼ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Թերեզյան մտնում է Կարմեղոս.
- 22 ՄԱՅԻՍ, ԵՐԵՔՇԱԲԹԻ. Քոյր Մարիայի (քոյր Մարիա Սուրբ Սրտի) Ուխտադրութիւնը.
- 1889 10 ՅՈՒՆՈՒԱՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Թերեզյայի վանական զգեստաւորումը.
- 12 ՓԵՏՐՈՒԱՐ, ԵՐԵՔՇԱԲԹԻ. Պրն. Մարթինի տեղափոխումը տնից առողջարան.
- 1890 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Թերեզյայի վանական Ուխտադրութիւնը.
- 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. Քօղաւորումը.
- 1891 8-15 ՀՈԿՏԵՄԲԵՐ. Հ. Ալեսիոյի կողմից քարոզուած վանական հոգեւոր կրթութիւնը, որը Թերեզյային մղեց դէպի վատահոլութեան ու սիրոյ ճանապարհը.
- 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՇԱԲԱԹ. Մայր Զենովէֆֆայի՝ Լիզէոյի Կարմեղոսի հիմնադրուհու մահը.
- 1893 20 ՓԵՏՐՈՒԱՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Քոյր Ագնէս Յիսուսին ընտրում է վանքի Մեծաւորուհի, իսկ Թերեզյան՝ նորընծաների դաստիարակութեամբ զբաղող մայր Մարիամի օգնական.
- 1894 29 ՅՈՒԼԻՍ, ԿԻՐԱԿԻ. Հօր՝ Պրն. Լուիջի Մարթինի մահը.
- 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՈՒՐԲԱԹ. Սելինի մուտքը Կարմեղոս.
- 1895 ՅՈՒՆՈՒԱՐ. Մայր Ագնէս Յիսուսին հրամայում է Թերեզյային զրի առնել մանկութեան յիշողութիւնները.
- 9 ՅՈՒՆԻՍ, ԿԻՐԱԿԻ, ՏՕՆ ԱՍԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ. Թերեզյան իրեն որպէս ողջակէզ զոհ է նուիրում Աստծոյ ողորմած Սիրոյն.
- 14 ՅՈՒՆԻՍ, ՈՒՐԲԱԹ. Աստուածային սիրոյ վերքի շնորհի ստացումը "Ճանապարհ Խաչի" աղօթքի կատարման ժամանակ.
- 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Թերեզյան վանքի մեծաւորուհու կողմից ընտրում է հոգեւոր քոյր, մի ապագայ առաքեալի՝ Բելլիեր նորընծայի, որն հետագայում անդամակցելու էր Սպիտակ Հայրերի միաբանութեանը.
- 1896 20 ՅՈՒՆՈՒԱՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Թերեզյան մայր Ագնէս Յիսուսին է յանձնում իր յիշողութիւնների տետրը (Առաջին Զեռագիրը).

- 24 ՓԵՏՐՈՒԱՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Սելինի Ուխտադրութիւնը քոյր ժընըվիեւ անուամբ.
- 21 ՄԱՐՏ, ՇԱԲԱԹ. Մայր Մարիամը, վերընտրուելով մեծաւորուհի, վերահաստատում է Թերեզային նորընծաների պատասխանատուի օգնական.
- ԱՊՐԻԼ 2 ԼՈՅՍ 3Ի ԳԻՇԵՐԸ, ԱԲԱԳ ՇԱԲԱԹՈՒԱՅ ՀԻՆԳՇԱԲԹԻ-ՈՒՐԲԱԹ. Առաջին արիւնաթքումը.
- 5 ԱՊՐԻԼ, ՁԱՏԻԿԻ ԿԻՐԱԿԻՆ ԿԱՄ ՅԱԶՈՐԳ ՕՐԵՐԸ. Հաւատքի դէմ ուղղուած ներքին փորձութիւնների սկիզբը, որոնք տեւելու էին մինչեւ Սրբուհու մահը.
- 10 ՄԱՅԻՍ, ԿԻՐԱԿԻ. Տեսնում է իր կեանքի ամենամխիթարական երազը.
- 30 ՄԱՅԻՍ, ՇԱԲԱԹ. Մայր Մարիամը Թերեզային է վստահում, որպէս երկրորդ հոգեւոր եղբայր, Արտաքին Առաքելութիւնների անդամ հ. Ադուլֆո Ռուլլանդին.
- 13-16 ՍԵՊՏԵՄԲԵՐ. Թերեզան, քոյր Մարիայի խնդրանքով, գրում է այն էջերը, որոնք ապագայում կազմելու էին իր ինքնակենսագրական երկրորդ ձեռագիրը.
- 1897 3 ՅՈՒՆԻՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Մայր Մարիամը, մեծաւորուհին, հրամայում է Թերեզային ամբողջացնել իր կեանքի պատմութիւնը, գրի առնելով յուշերն այն տարիների, որոնք անցել էին Կարմեղոսում.
- 8 ՅՈՒՆԻՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Թերեզան թողնում է իր խուցը, փոխադրուելու համար վանքի հիւանդաց բաժին.
- 8-10 ՅՈՒՆԻՍ. Սրբուհին թղթին է յանձնում իր ինքնակենսագրական երրորդ ձեռագրի վերջին տողերը.
- 30 ՅՈՒՆԻՍ, ՈՒՐԲԱԹ. Թերեզան ընդունում է Հիւանդաց Օժումը.
- 19 ՕԳՈՍՏՈՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Սրբուհու վերջին Հաղորդութիւնը.
- 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ. Երեկոյեան ժամը եօթն անց քսանի մօտ Թերեզան աւանդում է իր հոգին, սիրոյ յափշտակութեան մէջ.
- 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Սրբուհու թաղումը.
- 1910 Աստծոյ Աղախին քոյր Թերեզայի երանացման Դատի սկիզբը.
- 1917 Առաքելական Քննումը Աստծոյ Աղախնի առաքինութիւնների.
- 1921 14 ՕԳՈՍՏՈՍ. ՀՌՈՍ. Աստծոյ Աղախնի առաքինութիւնների հերոսական բնոյթի շուրջ Կոնդակը եւ Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս Տասնհինգերորդի քարոզը հոգեւոր մանկութեան մասին.
- 1923 26-27 ՄԱՐՏ. Աստծոյ Աղախնի մասունքների փոխադրումը գերեզմանից Կարմեղոսի մատուռ.
- 29 ԱՊՐԻԼ. Հռոմի "Սուրբ Պետրոս" Տաճարում քոյր Թերեզան հռչակում է Երանելի.
- 1925 17 ՄԱՅԻՍ. ՀՌՈՍ. "Սուրբ Պետրոս" Տաճարում կատարում է Թերեզայի սրբադասման արարողութիւնը Փիո Տասնմէկերորդ Քահանայապետի նախագահութեամբ.
- 1927 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ. Հռոմի Սրբազան Քահանայապետ Փիո Տասնմէկերորդի կողմից Սրբուհի Թերեզան հռչակում է "Քրիստոնէական Առաքելութիւնների Պաշտպան Սրբուհի".
- 1937 11 ՅՈՒՆԻՍ. ԼԻԶԷՆՅ. "Սրբուհի Թերեզա Յիսուս Մանկան" Տաճարի օժումն ու օրհնութիւնը Առաքելական Փոխանորդ կարդինալ Փաչելլիի՝ ապագայ Փիո Տասներկուերորդ Քահանայապետի ձեռքով.

1944 3 ՄԱՅԻՍ. Հռոմի Սրբազան Քահանայապետ Փիո Տասներկուերորդը Յիսուս Մանկան Սրբուհի Թերեզային հռչակում է Ֆրանսայի երկրորդ Պաշտպան Սրբուհի, Սրբուհի Ժաննա դ'Արքի հետ միասին.

1997 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ. Հռոմի Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պողոս Երկրորդը Յիսուս Մանկան Սրբուհի Թերեզային հռչակում է Եկեղեցու Վարդապետ:



## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌԱԳԻՐԸ

*Ուղղուած Մայր Ազնէս Յիսուսին  
(Իր քոյր Փօլինին)*

# 1. ԼՈՒՍԱՃԱՃԱՆՉ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԱԼԱՆՍՈՆՈՒՄ (1873–1877)

Յառաջաբանը – Ընտանեկան քաղցր մթնոլորտը – Ուրախ բնատրությունը – Անբաժանելի Սելինը – Մատնիչ կեցուածքը – Սատանայիկներ երազում – Մտերմությունը բնութեան հետ

Յ. Մ. Յ. Թ.<sup>1</sup>

Յունուար 1895

Յիսուս †

*Սպիտակ փոքրիկ ծաղկի գարնանային պատմութիւնը  
Իր իսկ կողմից գրուած  
Եւ ուղղուած մեծարգոյ Մայր Ազնէս Յիսուսին*

1. Ձեզ, Մայր իմ սիրելի, ձեզ՝ որ ինձ մայր էք կրկին անգամ<sup>2</sup>, յանձնում եմ հոգուս պատմութիւնը ... : Երբ պատուիրեցիք գրել այն, մտածեցի՝ թէ սիրտս կ'ապականուի ինքն իրենով զբաղուելով: Բայց Յիսուս ինձ զգացրեց, որ պարզութեամբ հնազանդուելով՝ հաճոյք կը պատճառեմ իրեն: Հետեւաբար, այժմ մէկ բան եմ միայն կամենում անել: սկսում եմ երգել այն՝ ինչ պարտաւոր եմ կրկնել յաւերժ. Տիրող ողորմութիւնը<sup>3</sup>:

2. Գրիչը ձեռքս առնելուց առաջ, ծունկի եկայ Աստուածամօր արձանի դիմաց<sup>4</sup> (նրա, որ մայրական հոգատարութեան բազում ապացոյցներ տուեց մեր ընտանիքին Երկնքի Թագուհու կողմից): Աղաչեցի նրան ղեկավարել ձեռքս: Մէկ տող անգամ չեմ կամենում գրել, եթէ հաճելի չէ իրեն: Ապա բացեցի Աւետարանը, եւ հայեացքս ասա այս խօսքերի վրայ ընկաւ. «Յիսուս, լեռ բարձրանալով, իր մօտ կանչեց նրանց՝ որոնց ինքը կամեցաւ. եւ նրանք գնացին Նրա մօտ» (Մրկ 3, 13):

3. Սա՛, իսկ եւ իսկ սա է խորհուրդը իմ կոչման, իմ ամբողջ կեանքի, եւ յատկապէս խորհուրդն այն առանձնաշնորհումների, որոնք Յիսուս պարգեւեց հոգուս: Յիսուս չի կանչում նրանց՝ ովքեր արժանի են, այլ՝ ում կամենում է ինքը, կամ, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը. «Աստուած ողորմում է նրան՝ ում կամենում է ողորմել, եւ գլխաւոր է նրա հանդէպ՝ ում հանդէպ կամենում է գլխաւոր լինել: Հետեւաբար, դա կախում չունի նրանից՝ ով փափաքում է, եւ ոչ էլ նրանից՝ ով ջանում է, այլ Աստուծոյ՝ որ ողորմում է» (Հռմ 9, 15–16):

4. Վաղուց ի վեր ինքս ինձ հարցնում էի՝ թէ ինչո՞ւ է Աստուած առաւելութիւններ շնորհում ոմանց, իսկ ոմանց՝ ոչ. ինչո՞ւ բոլոր հոգիները չեն շնորհագարդուում համաչափ կերպով: Ապշում էի՝ թէ ինչո՞ւ է զարմանալի շնորհներ

<sup>1</sup> Սկզբնատառերն են Յիսուս, Մարիամ, Յովսէփ եւ Թերեզա անուների:

<sup>2</sup> Մօր մահից յետոյ, Թերեզան որպէս մայր էր ընտրել իր քոյր Փօլինին, որն այժմ Մայրն էր (մեծաւորուհին) ամբողջ վանքի, մայր Ազնէս Յիսուսի անուամբ:

<sup>3</sup> Մղմ 88, 1

<sup>4</sup> Ժպիտի Աստուածամայրն է, որն այժմ պահուում է Լիզեոյի Կարմեղոսի մատուռում, ուր գտնուում են Սրբուհու մասունքները:

չուայլում Սրբերին, որոնք իր երբեմնի թշնամիներն էին, ինչպես Պողոս Առաքեալը, Սուրբ Օգոստինոսը, եւ ինչո՞ւ է, պիտի ասեմ՝ գրեթէ ստիպում նրանց ընդունելու իր պարզեւր: Ապա, երբ կարողում էի այն Սրբերի կենսագրութիւնները, որոնց մեր Տէրը փայփայեց օրօրոցից մինչեւ գերեզման, մաքրելով նրանց ճանապարհից բոլոր խոչընդոտները, որոնք կարող էին խանգարել նրանց դէպի Ինքն ուղղուած ընթացքին, պաշտպանելով նրանց հոգիներն այնքա՛ն շնորհներով՝ որ գրեթէ անհնարին էր դառնում նրանց մկրտութեան զգեստների անարատ շողարձակման մթազնումը, հարցնում էի ինքս ինձ. ինչո՞ւ են խեղճ վայրենիներն, օրինակ, հազար հազարներով մահանում առանց ստանալու Աստուծոյ անուան արտասանելու կարողութիւնը:

5. Բայց Յիսուս պարզաբանումներ տուեց ինձ այս խորհրդի շուրջ: Աչքերիս առաջ բացեց բնութեան գիրքը, եւ հասկացայ, որ արարչագործութեան բոլոր ծաղիկներն էլ գեղեցիկ են. հոյակապ վարդերն ու սպիտակափայլ շուշանները քն խափանում մանուշակի բուրմուռները, կամ մարգարտածաղկի անպատմելի պարզութիւնը ... : Եթէ բոլոր փոքրիկ ծաղիկները ցանկանային վարդեր լինել, բնութիւնը կը կորցնէր իր գարնանային զգեստը եւ դաշտերն այլեւս չէին զարդարուի ծաղիկների երփներանգութեամբ:

Այսպէս է նաեւ հոգիների աշխարհում, որը Յիսուսի պարտէզն է: Աստուած կամեցաւ ստեղծել մեծ Սրբերին, որոնք կարող են համեմատուել շուշաններին ու վարդերին, բայց ստեղծեց նաեւ փոքրիկ Սրբերին, եւ սրանք նոյնպէս պարտաւոր են գոհանալ մարգարտածաղիկներ կամ մանուշակներ լինելով, որովհետեւ արարուել են բերկրանք պատճառելու համար Տիրոջ հայեացքին, երբ Նա խոնարհուում է իրենց մօտ: Կատարելութիւնը կայանում է իր կամքը կատարելու մէջ, լինելով այնպիսին՝ ինչպիսին կամենում է Ինքը:

6. Հասկացայ մի ուրիշ բան եւս. Մեր Տիրոջ սէրը նոյնքան լաւ է արտայայտուում պարզ հոգիներում, որոնք քն դիմադրում իր շնորհին երբեք, որքան վեհ հոգիներում: Իրականում, սիրոյն է յատուկ խոնարհուելը, եւ եթէ բոլոր հոգիները նմանուէին Սուրբ Հայրապետներին, որոնք լուսաւորեցին Եկեղեցին իրենց ուսմունքի կանթեղներով, կը կարծուէր՝ թէ մարդասէրն Աստուած այնքան էլ շատ չի խոնարհուում նրանց հասնելու համար: Բայց Նա ստեղծեց մանկանը, որ չգիտէ ոչինչ եւ տկա՛ր տկա՛ր ճիչերով է միայն արտայայտուում. ստեղծեց վայրենուն, որն իր ամբողջական խեղճութեան մէջ՝ առաջնորդուելու համար բնական օրէնքն ունի միայն: Եւ Աստուած խոնարհուում է նրանց մօտ: Աւելին. այս վայրի ծաղիկներն են, որ հիացնում են Նրան, որովհետեւ այնքա՛ն պարզ են:

7. Այս աստիճան խոնարհուելով, Աստուած մեզ յայտնում է որպէս անսահմանօրէն մեծ: Միեւնոյն ձեւով, ինչպէս արեւը լուսաւորում է հսկայ մայրիներն ու փոքրիկ ծաղիկները, որոնք թւում է՝ թէ ոչինչ են, բայց եւ կարծես իւրաքանչիւրը միակն է աշխարհում, այնպէս էլ մեր Տէրն է զբաղում իւրաքանչիւր հոգու հետ այնպիսի սիրով, կարծես միայն այդ հոգին գոյութիւն ունի: Եւ ինչպէս բնութեան մէջ եղանակները դասաւորուած են այնպիսի կերպով, որ որոշուած օրը ծաղկել են տալիս ամենախոնարհ մարգարտածաղկին, այնպէս էլ ամէն բան համապատասխանում է իւրաքանչիւր հոգու օգտին:

8. Անկասկած, Մայր սիրելի, դուք կը հարցնէք՝ թէ արդեօք ո՞ւր եմ կամենում հասնել, որովհետեւ մինչեւ հիմա մի խօսք անգամ չասացի, որ նմանուէր կեանքիս

պատմութեանը: Բայց դուք հրամայեցիք ինձ ազատօրէն գրել այն՝ ինչ ծնունդ է մտքումս: Այս իսկ պատճառով, այնքան չեմ պատմելու իրական ու անձնական կեանքս, որքան մտքերս այն շնորհների շուրջ, որոնք Աստուած պարգեւեց ինձ: Գտնուում եմ գոյութեանս մի կէտում, որտեղից այլեւս կարող եմ դիտել անցեալը. հոգիս հասունութեան է հասել արտաքին ու ներքին փորձերի մէջ. այժմ, ինչպէս փոթորկից ուժասպառ մի կոկոն<sup>1</sup>, կրկին վերագտնում եմ ինձ եւ տեսնում, որ ինձնում եւս իրականանում են 22րդ սաղմոսի խօսքերը. «Տէրն է իմ հովիւը եւ կարօտութիւն չեմ ունենայ: Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ եւ հանդարտ ջրերի մօտ է տանում ինձ: Իմ անձին հանգիստ է շնորհում, առաջնորդում է ինձ արդարութեան շաւիղներում իր Անուան համար: Թէեւ մահուան ստուերներով լի ձորերում քայլեմ, չարիքից չեմ վախենայ, որովհետեւ Դու իմ հետ ես, Տէր»<sup>2</sup>:

9. Աստուած իմ հանդէպ միշտ լի եղաւ կարեկցանքով ու քաղցրութեամբ: Դանդաղաշարժ՝ պատժելու մէջ եւ շուայ՝ ողորմութեամբ (Մղմ 103, 8): Այսպիսով, Մայր իմ, երջանիկ եմ, որովհետեւ հնարաւորութիւնն ունեմ ձեր համար երգելու Տիրոջ ողորմութիւնը: Միայն ձեր համար եմ գրում Յիսուսի ձեռքով պոկուած խոնարհ ծաղկի պատմութիւնը, եւ խօսելու եմ՝ լքելով ինքս ինձ, առանց մտահոգուելու ոճի մասին, կամ այն բազմաթիւ շեղումների, որոնք անշուշտ թոյլ կը տամ: Մօր սիրտը միշտ էլ հասկանում է իր փոքրիկին, նոյնիսկ երբ այս վերջինս թոթովում է միայն: Այս իսկ պատճառով էլ վստահ եմ, որ կը հասկացուեմ, գուշակուելով ձեր կողմից. դուք էք, որ կազմաւորեցիք սիրտս եւ նուիրեցիք Յիսուսին:

10. Ինձ այնպէս է թւում, որ եթէ ծաղիկները կարողանային խօսել, կը պատմէին, ամենայն պարզութեամբ, այն՝ ինչ Տէրն արեց իրենց համար, եւ չէին ջանայ թաքցնել աստուածային պարգեւները: Կեղծ խոնարհութեան պատճառով չէին ասի. «Ապաշնորհ եմ, գարշահոտ, արեւը նուաստացրեց իմ փայլը, մրրիկը փշրեց իմ ցօղունը», երբ իրենց ներսում կը տեսնէին ճիշտ հակառակը:

11. Ծաղիկը, որ այստեղ պատմում է իր պատմութիւնը, ուրախանում է, որովհետեւ հուշակելու է Յիսուսի կողմից ձրիաբար ստացած խնամքները. նա չունի ոչինչ – եւ նա լաւ գիտէ դա – որով կը կարողանար իր վրայ հրաւիրել Աստուծոյ հայեացքը, բայց նաեւ գիտէ՝ որ աստուածային ողորմութիւնն է միայն, որ ստեղծեց իր մէջ գոյութիւն ունեցող բարին: Ծնեց նրան մի սուրբ երկրում, որը գրեթէ ամբողջովին թափանցուած էր կուսական բուրմունքով: Նրանից առաջ ծլարձակեցին ձիւնափայլ ութ ա՛յլ շուշաններ<sup>3</sup>: Իր անհուն սիրոյ համաձայն, կամեցաւ խոնարհ

<sup>1</sup> Երբ թերեզան գրում էր այս տողերը, հազիւ մի քանի ամիս էր անցել հօր մահից:

<sup>2</sup> Մղմ 22, 1-4

<sup>3</sup> Թերեզան խօսում է իր առանձնաշնորհեալ ընտանիքի մասին: Նրա ծնողներն էին Լուիջի Մարթինը (ծն. 22 Օգ. 1823) եւ Զէլիա Գէրէնը (ծն. 23 Դեկտ. 1831): Սկզբում երկուսն էլ կամենում էին ընդգրկել վանական կեանքը: Ամուսնանում են 1858ի Յուլիսի 13ին: Այս օրհնեալ միութիւնից ծնունդ են ինը զաւակներ. Մարիա Լուիջիա, Կարմեղոսում՝ քոյր Մարիա Սուրբ Սրտի (ծն. 22 Փետր. 1860, † 19 Յունիս 1940). Մարիա Փօլին, Կարմեղոսում՝ քոյր Ազնէս Յիսուսի (ծն. 7 Սեպտ. 1861, † 28 Յուլիս 1951). Մարիա Լէոնիա, քոյր Տրանչեսկա Թերեզա (ծն. 3 Յունիս 1863, † 16 Յունիս 1941). Մարիա Էլէնա (ծն. 13 Հոկտ. 1864, † 22 Փետր. 1870). Մարիա Յովսէփ Լուիջի (ծն. 20 Սեպտ. 1866, † 14 Փետր. 1867). Մարիա Յովսէփ Յովհաննէս (ծն. 19 Դեկտ. 1867, † 24 Օգոստ. 1868). Մարիա Սելին,

ծաղկին պաշտպանել աշխարհի թունաւոր շնչից. արդէն պատրաստուում էին բացուել նրա թերթիկները, երբ Փրկիչը նրան Կարմեղոսի թու փոխադրեց<sup>1</sup>, ուր արդէն իսկ բուրում էին երկու շուշաններ. ճիշտ այն երկուսը, որոնք նրան բարուրում եւ քաղցրօրէն օրօրում էին իր առաջին ծլարձակման օրերին<sup>2</sup> ... : Ահա եօթ տարիներ են, ինչ ծաղիկը արմատներ է գցել կոյսերի Փեսայի պարտէզում, կոյսեր՝ որոնք այժմ Նրա մօտ ծածանում են իրենց երեք անուշահոտ ծաղկեպսակները<sup>3</sup>. ոչ շատ հեռու, մի այլ ծաղիկ է բացւում Յիսուսի հայեացքի ներքոյ<sup>4</sup>, իսկ երկու օրհնեալ աստղերը, որ ծնեցին նրանց, այլեւս յաւիտեան իրար են միացել երկնային Հայրենիքում<sup>5</sup>: Այնտեղ կրկին գտել են այն չորս շուշաններին, որոնց ծաղկելը երկիրը չտեսաւ<sup>6</sup>: Ա՛հ, թող Յիսուս չկամենայ երկար թողնել այս օտար ափերում նրանց՝ որոնք մնացել են աքսորում. թող շուտով ամբողջ սպիտակ ծաղկեփունջը լրանայ Երկնքում:

12. Մայր իմ, կարճառօտ խօսքերով համառօտեցի այն՝ ինչ Տէրն արեց իմ համար: Իսկ այժմ, մուտք եմ գործում մանկութեանս տարիներից ներս: Գիտեմ, որ այնտեղ՝ ուր ուրիշ որեւէ մէկը չէր տեսնի ա՛յլ բան, եթէ ոչ՝ ձանձրալի շատախօսութիւն միայն, ձեր մայրական սիրտը կը գտնի մի թովիչ պատմութիւն: Իսկ յիշատակները, որ արթնացնելու եմ, նաեւ ձերն են, որովհետեւ մանկութիւնս ձեր կողքին անցաւ, եւ ես երջանկութիւնն ունեմ զաւակը լինելու այն ծնողների՝ որոնք պարուրեցին մեզ միեւնոյն խնամքներով եւ միեւնոյն քնքշութեամբ: Թող նրանք օրհնեն իրենց զաւակներից փոքրագոյնին եւ օգնեն երգելու Տիրոջ ողորմութիւնը:

13. Հոգուս պատմութեան մէջ, մինչեւ Կարմեղոս մտնելս, յստակօրէն տեսնում եմ երեք շրջան: Առաջինը, հակառակ իր կարծութեանը, յիշողութիւններով ամենաաղքատը չէ. տարածւում է մտքիս առաջին զարթօնքից մինչեւ մեր սիրելի մայրիկի մահը:

Աստուած կամեցաւ ինձ գիտակցութիւն շնորհել, երբ դեռ շատ փոքր էի, եւ յիշողութեանս մէջ փորագրել մանկութեանս մանրամասներն այնքան խոր կերպով, որ թւում է՝ թէ երէկուայ դէպքերն եմ պատմելու: Անկասկած, Յիսուս Իր սիրոյ համաձայն կամենում էր, որ լաւ ճանաչէի այն անհամեմատելի Մայրիկին, որին տուել էր ինձ, եւ որին շտապում էր թագադրել Երկնքում:

14. Ամբողջ կեանքիս ընթացքում, Աստուած կամեցաւ շրջապատել ինձ սիրով, առաջին իսկ յիշատակներս ժպիտներ ու քնքոշ քաղցրախօսութիւններ են. բայց, եթէ

---

Կարմեղոսում՝ քոյր Ժընըվիեւ (ծն. 28 Ապրիլ 1869, † 25 Փետր. 1959). Մարիա Մէլանիա Թերեզա (ծն. 16 Օգոստ. 1870, † 8 Հոկտ. 1870). վերջինը, Սրբուհին, Մարիա Ֆրանչեսկա Թերեզա, Կարմեղոսում՝ քոյր Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի: Նա ծնուեց Ալանսոնում 1873ի Յունուարի 2ին եւ թողեց երկիրը Լիզէոյում, 1897ի Սեպտ. 30ին, 24 տարեկան հասակում: Թերեզան իրաւացիօրէն կարող էր ասել, որ սերում է «ձիւնափայլ ութ ա՛յլ շուշաններից». երկու քոյրիկներն ու երկու եղբայրները երկինք մեկնեցին մանուկ հասակում, իսկ միւս բոլոր չորս քոյրերը, ինչպէս եւ ինքը, ընդգրկեցին վանական կեանքը:

<sup>1</sup> Թերեզան Լիզէոյի Կարմեղոս մտաւ տասնհինգ տարեկան հասակում:

<sup>2</sup> Սրբուհու մեծ քոյրերն են. մայր Ագնէս Յիսուսի եւ քոյր Մարիա Սուրբ Սրտի:

<sup>3</sup> Կատարելով իր որդիական պարտականութիւնը հիւանդ հօր հանդէպ, վերջինիս մահից յետոյ Սելինը նոյնպէս շտապեց միանալ Կարմեղոսի իր քոյրերին 1894ի Սեպտ. 14ին: Սրբուհին, որ գրում է 1895ին, կարող է հետեւաբար խօսել իր մօտակաջքում ծփացող «երեք ծաղկեպսակների» մասին:

<sup>4</sup> Լէոնիա քոյրն է, որ մայրապետ էր դարձել մի ա՛յլ վանքում:

<sup>5</sup> Թերեզայի մայրը մահացել էր 1877ի Օգոստ. 27ին, իսկ հայրը 1894ի Յուլ. 29ին:

<sup>6</sup> Խօսքը վերաբերւում է Թերեզայի վաղամեռ երկու եղբայրներին եւ երկու քոյրերին:

այդքան սէր էր տեղադրել իմ շրջապատում, դրել էր նրանից նաեւ իմ սրտում, ստեղծելով այն սիրող ու զգայուն: Այսպիսով, շա՛տ շա՛տ էի սիրում հայրիկին ու մայրիկին եւ ցուցադրում էի գորովս հազար ու մի ձեւերով, որովհետեւ շատ սրտաբաց էի: Միայն թէ միջոցները, որ գործածում էի, երբեմն տարօրինակ էին լինում, ինչը փաստում է մայրիկի նամակներից քաղուած այս հատուածը. «Փոքրիկը մի անգին չարածճի է, փայփայում է ինձ՝ մաղթելով ինձ մահ. "Ա՛հ, որքան կը կամենայի, որ մահանայիր, խեղճ Մայրիկ իմ ...": Իսկ երբ յանդիմանում է, դառնում է դէպի ինձ. "Բայց որպէսզի կարողանաս Երկինք մեկնել. չէ՞՞ որ դու ինքդ ես ասում" որ պնտեղ գնալու համար հարկաւոր է նախ մեռնել»: Եւ նմանօրինակ խօսքերով մահ է մաղթում նաեւ հօրը, երբ սիրոյ խանդավառման մէջ է»<sup>1</sup>:

15. 1874ի Յունիսի 25ին, երբ հազիւ տասնութ ամսեկան էի, ահա թէ ինչ է պատմում մայրիկին իմ մասին. «Զեր հայրը մի ճոճանակ հաստատեց: Սելինը երջանիկ է այնքան՝ որ աւելին անհնարին է, բայց պէտք է տեսնել փոքրիկին, երբ խաղում է: Ծիծաղելի է, նստում է ինչպէս մեծահասակ, վտանգ չկայ՝ որ յանկարծ թողնի պարանը, որովհետեւ երբ յոգնում է, սկսում է ճչալ: Առջեւից մի այլ պարան էլ ենք կապում, բայց, այս բոլորի հետ մէկտեղ, հանգիստ չեմ կարողանում մնալ, երբ տեսնում եմ նրան բարձր տեղ դրուած»:

16. «Փոքրիկի հետ այս վերջերս հետաքրքրաշարժ արկած պատահեց: Սովորութիւն ունեմ Պատարագի գնալ ժամը հինգն անց կէսին. սկզբում չէի համարձակում նրան մենակ թողնել, բայց տեսնելով որ չի արթնանում, որոշեցի գնալ: Պառկեցրի իմ մահճակալի մէջ եւ այնպէս մօտեցրի օրօրոցը, որ այլեւս չէր կարող ընկնել: Այսպէս էի վարում օրեր շարունակ: Մի օր, մոռացայ մօտեցնել օրօրոցը: Վերադարձայ, փոքրիկն այնտեղ չէ. միեւնոյն ակնթարթին ձայն լսեցի, նայեմ՝ տեսնեմ նստել է աթոռակի վրայ, անկողնի մօտ, գլխիկը յենել է բարձին ու քնել, անյարմար դիրքով ընկած: Դեռ չեմ կարողանում հասկանալ՝ թէ ինչպէս է կարողացել ընկնել ու նստել աթոռակի վրայ, քանի որ պառկած էր: Երախտագիտութիւնս յայտնեցի Աստծուն, որ նրան ոչինչ չէր պատահել: Իրօք մի նախաինամական դէպք է. պէտք է որ գտին ընկնէր. իր պահապան հրեշտակն է հսկել. նաեւ քաւարանի հոգիները, որոնց բարեխօսութեանն եմ դիմում ամէն օր, պահպանեցին նրան: Ես այսպէս եմ մեկնաբանում իրողութիւնը. դուք մեկնաբանեցէ՛ք՝ ինչպէս ձեզ է թւում ... »:

17. Նամակի վերջում, մայրիկը գրում է. «Ահա փոքրիկը, որ թաթիկները երեսիս է դնում ու գրկում ինձ: Խեղճ փոքրիկ, չի կամենում թողնել ինձ, միշտ հետս է. շատ է սիրում պարտէզ ելնել, բայց եթէ ես չեմ գնում, չի մնում այնտեղ եւ լալիս է, մինչեւ իմ մօտ բերեն»<sup>2</sup>: Ահա մի ուրիշ հատուած եւս մի այլ նամակից. «Երէկ չէ առաջի օրը Թերեզան հարցնում էր՝ թէ արդեօք գնալո՞ւ է Երկինք: Ասացի՛ այո՛, եթէ իսկապէս բարի լինի: Պատասխանեց. "Այո՛, բայց եթէ չլինեմ բարի՛ բարի՛, կը գնամ դժո՞խք ... գիտեմ՝ ինչ կ'անեմ. կը փարուեմ քեզ, որ Երկինք ես գնալու, ինչպէ՞ս կը կարողանայ բարին Աստուած հեռացնել ինձ քեզնից: Դու ինձ գրկիդ մէջ կը պաշտպանես": Կարդացի աչքերում. համոզուած է՝ որ բարին Աստուած իրեն ոչինչ անել չի կարող, եթէ մայրիկի գրկում է»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տկն. Մարթինի 5 Դեկտ. 1875 թուակիր նամակը Փօլինին:

<sup>2</sup> Տկն. Մարթինի 25 Յունիս 1874 թուակիր նամակը Մարիային ու Փօլինին, որոնք այդ շրջանում ուսանում էին Լը Մանի վարժարանում:

<sup>3</sup> 29 Հոկտ. 1876 թուակիր նամակը Փօլինին:

18. «Մարիան շատ է սիրում փոքրիկ քրոջը, քնքշութիւն է գտնում նրանում, իսկ փոքրիկն իր հերթին վախենում է նրան տհաճութիւն պատճառելուց: Երէկ կամեցայ նրան վարդ նուիրել, գիտէի՝ որ հաճոյք կը պատճառեմ. բայց յանկարծ սկսեց աղաչել, թէ պէտք չէ. "Մարիան արգելել է կտրել դրանք": Մի տակնուվրայ եղած վարդ էր, բայց միեւնոյնն է, քանի որ տուեցի իրեն երկու հատ, չէր համարձակում այլեւս տուն փրադառնալ: Սկսեցի համոզել՝ թէ վարդերն իմն են. "Ո՛չ, - ասում է, - Մարիայինն են"»:

19. «Շատ զգայուն մանուկ է: Հագիւ է մի փոքրիկ չարութիւն անում, անհրաժեշտութիւն է՝ որ դա իմանան բոլորը: Երէկ ակամայ վար դցեց սրահակներից մէկը, մի ողորմելի վիճակում էր, պէտք է անմիջապէս յայտնէր հայրիկին. նա եկաւ չորս ժամ յետոյ, երբ պատահածի մասին չէր մտածում այլեւս ոչ ոք. բայց ինքն իսկոյն վազեց Մարիայի մօտ. "Արագացրո՛ւ, ասա՛ հայրիկին, որ ես պատուեցի թողութիւն": Մնաց իր տեղում կանգնած ինչպէս մի ոճրագործ, որ սպասում է դատաւիճուի արձակմանը: Իր փոքրիկ ուղեղում համոզուած է, որ ակելի հեշտօրէն կը ներուի, եթէ հէնց ինքը իրեն մեղադրի»<sup>1</sup>:

20. Շատ էի սիրում կնքամօրս<sup>2</sup>: Առանց նկատել տալու, ուշադիր էի այն ամէնին՝ ինչ ասում եւ արւում էր իմ մօտակայքում. թւում է՝ թէ իրողութիւնները դատում էի ինչպէս այժմ: Մեծ հոգատարութեամբ էի ունկնդրում այն՝ ինչ Մարիան ուսուցանում էր Սելինին, անելու համար այնպէս՝ ինչպէս ինքն էր անում: Երբ թողեց Վարժարանը<sup>1</sup>, խելօ՛ք խելօ՛ք էի մնում եւ ինչ էլ կամենար՝ կատարում էի, ստանալու համար Սելինին տրուող դասախօսութիւնների ժամանակ սենեակում մնալու շնորհը: Եւ նա բազում նուէրներ էր շնայլում ինձ, որոնք, փոքրարժէք լինելով հանդերձ, մեծագոյն գոհունակութիւն էին ինձ պատճառում:

21. Հպարտ էի երկու քոյրերիս համար, բայց նրանցից մէկը մանկութեանս գաղափարականն էր. Փօլինը: Երբ սկսեցի խօսել, եթէ մայրիկը հարցնում էր. «Ո՞ւմ մասին ես մտածում», պատասխանը երբեք չէր փոխւում. «Փօլինի»: Մի ուրիշ անգամ, մատիկներս ապակուն էի քսում ու ասում. «Գրում եմ "Փօլին"»: Յաճախ էի լսում, որ Փօլինը մայրապետ էր դառնալու. այնժամ, առանց յստակօրէն հասկանալու՝ թէ խօսքն ինչի մասին է, մտածում էի. «Ուրեմն, ես նոյնպէս միանձնուհի կը դառնամ»: Մա առաջին յուշերիցս մէկն է. այդ օրերից ի վեր երբեք չփոխեցի որոշումս: Դո՛ւք եղաք, Մայր սիրելի, որին Յիսուս ընտրեց՝ ինձ իրեն նուիրելու համար: Դուք այն ժամանակ իմ հետ չէիք, բայց մի կապ արդէն իսկ ստեղծուել էր մեր հոգիների միջեւ. իմ գաղափարականն էիք, ցանկանում էի ձեզ նմանուել, եւ ձեր օրինակը եղաւ՝ որ երկու տարեկան հասակիցս ի վեր ձգեց ինձ դէպի կոյսերի փեսան: Ա՛հ, քանի՛ քանի՛ քաղցր խորհրդածութիւններ կը կամենայի հաղորդել ձեզ: Բայց պէտք է շարունակեմ փոքրիկ ծաղկի պատմութիւնը, ամբողջական եւ ընդհանուր պատմութիւնը, որովհետեւ եթէ փորձէի մանրամասնօրէն խօսել Փօլինի հետ ունեցած յարաբերութիւններիս մասին, ստիպուած կը լինէի մի կողմ թողնել մնացածը:

<sup>1</sup> 21 Մայիս 1876 թուակիր նամակը Փօլինին:

<sup>2</sup> Թերեզայի մկրտութեան կնքամայրը իր իսկ քոյր Մարիան էր:

22. Սիրելի Լէոնիաս, նա նոյնպէս մեծ տեղ էր գրաւում իմ սրտում: Շատ բարի էր իմ հանդէպ: Երեկոները նա էր, որ խնամում էր ինձ, մինչ ամբողջ ընտանիքը գնում էր գրօսանքի: Ականջներին մէջ դեռ ղողանջում են այն գեղեցիկ օրօրոցայինները, որ երգում էր անկողնուս մօտ նստած: Բոլոր գործերում աշխատում էր գտնել ինձ հաճոյք պատճառելու կերպը, այն աստիճան՝ որ շատ էր տխրում, եթէ յանկարծ հակառակում էի իրեն:

23. Յստակ կերպով յիշում եմ նրա առաջին Հաղորդութիւնը<sup>2</sup>, եւ յատկապէս այն պահը, երբ գրկեց ինձ՝ ժամատուն մտցնելու համար. մեծ քրոջս կողմից այդ կերպով տարուած լինելն ինձ հէքեաթային էր թւում. նա ամբողջովին սպիտակ զգեստների մէջ էր, ինչպէս ես: Երեկոյեան ինձ անկողին տարան սովորական ժամին, դեռ շատ փոքր էի՝ ճաշկերոյթին մասնակցելու համար. բայց այժմ էլ աչքերիս առջեւ է հայրիկը, որ քաղցր խմորեղէն բերեց իր փոքրիկ թագուհուն: Յաջորդ օրը, կամ մի քանի օր յետոյ, մայրիկի հետ այցելեցինք Լէոնիայի փոքրիկ ընկերուհուն: Կարծեմ այդ օրն էր, որ մեր սիրելի մայրիկն առաջնորդեց մեզ ինչ որ մի պատից այն կողմ, ճաշից յետոյ մի քիչ գինի մեզ տալու համար (այն ճաշից, որ մեր համար պատրաստել էր տիկին Դագորոն<sup>3</sup>), որովհետեւ չէր կամենում մերժելով վերաւորել այդ բարի կնոջը, միաժամանակ կամենալով որ ոչինչ չպակասի մեզ: Որքան քնքշալի է մօր սիրտը եւ ինչպէս է ճառագայթում իր գորովը հազար ու մի խնամքներով, որոնց մասին չէր մտածի թերեւս ուրիշ ոչ ոք:

24. Այժմ ինձ մնում է խօսել իմ սիրելի Սելինի, մանկութեանս ընկերուհու մասին, բայց յուշերս այնքան բազմաթիւ են, որ չգիտեմ՝ թէ որոնք ընտրեմ: Աւելի լաւ է մի քանի հատուածներ մէջբերեմ այն նամակներից, որոնք Մայրիկի կողմից գրւում էին վարժարանի համար, բայց չեմ արտագրի ամբողջութեամբ, ապա թէ ոչ՝ շատ երկար կը ստացուի ... : 1873ի Յուլիսի 10ին, ծննդեանս տարին, գրում է. «Հինգշաբթի, դայեակն<sup>4</sup> այստեղ էր բերել Թերեզային, որը ծիծաղելուց բացի ուրիշ ոչինչ չարեց. յատկապէս Սելինը հաճոյք պատճառեց նրան, շարունակ քրքջում էին միասին: Արդէն ուզում է խաղալ, եւ շուտով կը սկսի. տոտիկների վրայ կանգնում է ուղիղ, կարծես փայտէ ձող լինի: Համոզուած եմ, որ շուտով կը սկսի քայլել, եւ որ բարի բնաւորութեան տէր կը լինի. շատ խելացի է թւում, իսկ դէմքը՝ նախասահմանուածի դէմք է ... »:

Բայց յատկապէս դայեակի մօտից վերջնականապէս տուն վերադառնալուցս յետոյ յայտնեցի Սելինի հանդէպ ունեցած մեծագոյն համակրանքս: Հասկանում էինք միմեանց հրաշալի կերպով, միայն թէ ես աւելի աշխոյժ էի եւ նուազ միամիտ՝ քան նա. այդ ժամանակ կը լինէի նուազագոյնը երեք ու կէս տարեկան, բայց ինձ թւում էր՝ թէ նա իմ նոյն տարիքին է:

25. Ահա մի հատուած մայրիկի նամակներից, որը ձեր առաջ կը գծագրի Սելինին քաղցրաբարոյ, իսկ ինձ՝ չար. «Սելինը իրօք տրամադիր է առաքինութեանը, դա իր էութեան մտերիմ զգացումն է, մաքուր հոգի է, որ ատելութիւն ունի չարի հանդէպ: Իսկ ինչ վերաբերում է չարածճիին, չգիտեմ թէ ինչ է դառնալու:

<sup>1</sup> Մարիան թողեց Լը Մանի վարժարանը 1875ի Յուլիսին:

<sup>2</sup> 1875ի Մայիսի 23ին: Թերեզան այդ ժամանակ միայն երկուսուկէս տարեկան էր:

<sup>3</sup> Տկն. Դագորոն «Լէոնիայի Փոքրիկ Ընկերութեան» հոգաբարձու մայրն էր:

<sup>4</sup> Ծննդից երկու ամիս անց, Թերեզան ստիպուած յանձնուած է տիկին Ռոզ Թայլի խնամքին, որն ապրում էր գիւղում, Ալանսոնից ոչ շատ հեռու:

Անպիտանը փոքրիկ է ու այնքա՛ն ցրուած: Աւելի խելացի է՝ քան Սելինը, բայց նուազ անուշիկ եւ գրեթէ անյաղթելի յամառ. երբ ասաց ”ոչ”, վերջ. դու բանտարկիր նրան նկուղում ամբողջ օրը, կը գերադասի քնել այնտեղ՝ քան ասել ”այո”:

26. Միրտը, սակայն, ոսկի է, ազնուաբարոյ է ու անկեղծ. հետաքրքիր է նրան տեսնելը, երբ կանգնում է ետեւ՝ խոստովանանքի համար. ”Մայրիկ, մի անգամ հրեցի Սելինին, միայն մի անգամ, մի անգամ էլ հարուածեցի, բայց այլեւս չեմ անի”։ (Այսպէս այն բոլորը, որ անում է)։ Հինգշաբթի երեկոները զբօսանքի ենք ելնում երկաթուղային կայարանի մօտակայքում, ամէն կերպ ջանում է սպասասրահ մտնել՝ Փօլինին փնտռելու համար, առջեւ է վազում այնպիսի ուրախութեամբ, որ խանդավառում է նաեւ ինձ. բայց երբ տեսնում է, որ պէտք է տուն վերադառնանք առանց զնացք նստելու՝ ”Փօլինին փնտռելու” զնալու համար, լալիս է ամբողջ ճանապարհին ... »<sup>1</sup>:

27. Այս վերջին տողերը յիշեցնում են ինձ այն երջանկութիւնը, որ ապրում էի՝ երբ տեսնում էի ձեզ Լը Մանից վերադառնալիս. դուք, Մայր իմ, գրկում էիք ինձ, իսկ Մարիան՝ Սելինին: Ես ողորում էի ձեզ հարիւրաւոր քաղցրախօսութիւններով եւ դէպի ետ էի ձգւում, հիանալու համար ձեր երկար հիւսերով. ապա տալիս էիք ինձ մի կոյրհատ, որն իմ համար էիք պահած լինում երեք ամիս: Մի պահ մտածում էի, որ այդ մասունքը իմ համար էր: Յիշում եմ նաեւ Լը Ման կատարուած ճամփորդութիւնը<sup>2</sup>. առաջին անգամ էի զնացք նստում: Ինչպիսի երջանկութիւն էր միայն մայրիկի հետ ճամփորդելը: Սակայն սկսեցի լալ, այժմ չեմ յիշում ինչու, եւ խեղճ մայրիկս չկարողացաւ Լը Մանի մօրաքրոջս<sup>1</sup> ներկայացնել այլ բան՝ եթէ ոչ մի տգեղ աղջնակ, որն ամբողջովին կարմրել էր՝ ճանապարհին հեղած արցունքների պատճառով: Խօսակցութիւններից ոչինչ չեմ յիշում, այլ միայն այն պահը, երբ մօրաքրոյրը քաղցրաւենիքներով լի մի կողովիկ տուեց ինձ, որոնց վրայ գահակալում էին շաքարի երկու օղակներ, ճիշտ իմ մատի հաստութեան: Անմիջապէս աղաղակեցի. «Ինչպիսի՛ գեղեցկութիւն: Մի օղակ էլ Սելինի համար կայ»: Ա՛հ, դժբախտութիւն: Վերցրի կողովիկը, միւս ձեռքս տուի մայրիկին եւ զնացինք: Մի քանի քայլ յետոյ հայեացք նետեցի կողովին եւ ի՞նչ տեսնեմ. բոլոր քաղցրեղէնները թափուել էին ճանապարհին: Լաւ նայեցի ու սեսայ, որ օղակներից մէկը նոյնպէս արժանացել էր քաղցրեղէնների ողբերգական ճակատագրին. այլեւս ոչինչ էլ չկար Սելինի համար: Այդ պահին վիշտս ժայթքեց ինչպէս հրաբուխ, խնդրում էի ետ վերադառնալ, բայց մայրիկն ուշադրութիւն չդարձրեց. իսկ սա արդէն շատ էր, արցունքներին յաջորդեցին ճիչերը ... չէի հասկանում՝ թէ ինչպէս էր կարողանում չկիսել վիշտս, եւ այս իսկ պատճառով տառապում էի շատ ... :

28. Վերադառնամ նամակներին, որոնցում մայրիկը խօսում է իմ ու Սելինի մասին. սա լաւագոյն միջոցն է՝ ծանօթացնելու համար ձեզ իմ բնաւորութեանը: Ահա մի հատուած, որում թերութիւններս փայլում են կենդանի գոյներով. «Սելինը զբաղւում է փոքրիկի հետ խորանարդների խաղով. երբեմն վիճում են, բայց Սելինը զիջում է, առաքինութիւնների իր թագի վրայ մի մարգարիտ աւելի ունենալու համար: Ստիպուած եմ երբեմն բացատրել ու հասկացնել խեղճ փոքրիկին, որ

<sup>1</sup> 14 Մայիս 1876 թուակիր նամակը Փօլինին:

<sup>2</sup> Երկուշաբթի, 29 Մարտ 1875:

վտանգաւոր անապարանք ունի. երբ իրերն իր գաղափարների համաձայն չեն ընթանում, գետին է գլորւում ինչպէս յուսահատ: Պահեր կան, որ իր ուժերից վեր են, դրանցում կարծես խեղդուած լինի: Շատ ջղային մանուկ է, բայց նաեւ անուշիկ ու շատ խելացի. յիշում է ամէն բան»<sup>2</sup>:

29. Տեսնում էք, Վտեւաբար, Մայր իմ, թէ որքան հեռու էի անթերի մանուկ լինելուց: Եւ նոյնիսկ չէին կարողանում ասել, թէ հանգիստ էի գէթ քնած ժամանակ, որովհետեւ գիշերն ակելի աշխոյժ էի՝ քան ցերեկը. մի կողմ էի նետում բոլոր ծածկոցները, ապա (միշտ քնած) հարուածներ էի իջեցնում փոքրիկ անկողնուս ճաղերին, այնպէս՝ որ ցաւից ստիպւում էի արթնանալ: Այդպիսի դէպքերում հեծկլտում էի. «Մայրիկ, "ծեծուած" եմ»: Խեղճ մայրիկ, ստիպուած էր վեր կենալ ու հաստատել, որ իրօք կապտուկներ ունէի երեսիս. "ծեծուած" էի: Լաւ ծածկում էր ինձ, ապա վերադառնում անկողին, բայց մի րոպէ չանցած՝ ես կրկին սկսում էի "ծեծուած" լինել, այն աստիճան՝ որ ստիպուած էին ինձ անկողնուն շղթայել: Ամէն երեկոյ, Սելինը գալիս էր կապելու այն բազմաթիւ ժապաւէնները, որոնք սահմանուած էին չարածձիին "ծեծուել" ու մայրիկին արթնացնել արգելելու գործին: Եւ այս միջոցը մեծ յաջողութիւններ ունեցաւ. ակելի խոհեմ դարձայ քնած ժամանակ:

30. Բայց մի ուրիշ թերութիւն էլ ունէի (արթուն ժամանակ), որի մասին մայրիկը պատմում է իր նամակներում. այն է՝ մի մեծ անձնասիրութիւն: Կը տամ միայն երկու օրինակ, պատմութիւնը չափազանց չերկարեցնելու համար: Մի օր, մայրիկն ինձ ասաց. «Թերեզա, եթէ համբուրես յատակը, քեզ մէկ դրամ կը տամ»: Մէ՛կ դրամ: Իմ համար մի ամբողջ հարստութիւն էր եւ նրան տիրանալու համար բաւական էր մի քիչ ցածրացնել բարձրութիւնս, քանի որ նուազագոյն հասակս այնքան էլ մեծ տարածութիւն չէր թողնում իմ ու յատակի միջեւ: Եւ սակայն, հպարտութիւնս չհամակերպուեց յատակը համբուրելու գաղափարին. ուղղակի աննուաճելիութեամբ ասացի. «Ա՛հ ո՛չ, մայրիկ իմ սիրելի, նախընտրում եմ մէկ դրամից պակաս արժող գործեր կատարել»:

31. Մի ուրիշ անգամ պէտք է Գոռնյի գնայինք, տիկին Մոնիէի մօտ<sup>3</sup>: Մայրիկը պատուիրեց Մարիային ժանեակներով զարդարուած մի գեղեցիկ երկնագոյն զգեստ հագցնել ինձ, բայց բաց չթողնել ձեռքերս՝ արեւից պաշտպանելու համար: Մեծ անտարբերութիւն ցուցաբերեցի զգեստի հանդէպ, ինչը բնական է այդ տարիքի մանուկների համար, բայց միեւնոյն ժամանակ մտածում էի, որ ակելի գեղեցիկ կը լինէի իմ մերկ թաթիկներով: Այնպիսի բնաւորութեամբ, ինչպիսին իմն է, եթէ յանկարծ դաստիարակուէի առաքինագուրկ ծնողներից, կամ եթէ, ինչպէս Սելինը, շփացուէի Լուիզայից<sup>1</sup>, թերեւս շատ չար դառնայի եւ, թերեւս, կորէի յաւէտ:

32. Բայց Յիսուս հսկում էր իր փոքրիկ նշանածի վրայ, ամէն ինչ նրա օգտին ծառայեցնելով. այն աստիճան, որ թերութիւններն անգամ, ճիշտ ժամանակին զսպուելով, նպաստեցին կատարելութեան մէջ նրա յառաջխաղացմանը ... : Քանի որ անձնասէր էի, բայց սիրում էի նաեւ բարին, հազիւ սկսեցի լրջօրէն մտածել (իսկ

<sup>1</sup> Մարիա Լուիզա Գէրէնը՝ Թերեզայի ակազ մօրաքոյրը նոյնպէս մայրապետ էր (մինչեւ 1858թ. Լը Մանում): Մահացաւ 1877ի Փետր. 24ին:

<sup>2</sup> Տկն. Մարթինի 5 Դեկտ. 1875 թուակիր նամակը Փօլինին:

<sup>3</sup> Տկն. Թիֆէնի՝ Լէոնիայի կնքամօր քոյրը:

սկսեցի մտածել երբ դեռ փոքրի՛կ փոքրի՛կ էի), բաւական էր՝ որ ասէին ինձ. սա բարի չէ, եւ ես այն կրկնել չէի տալիս երկրորդ անգամ: Հաճոյքով եմ նկատում մայրիկի նամակներում, որ մեծանալով՝ աւելի ու աւելի էի մխիթարում իրեն: Բարի օրինակներ էի միայն տեսնում, բնական է՝ որ կամենայի դրանց հետեւել: Ահա թէ ինչ է գրում Մայրիկը 1876ի նամակներից մէկում. « ... քանի որ Թերեզան կամենում է մասնակցել "փորձառութիւնների" գործադրմանը<sup>2</sup>: Անպատմելի մանուկ է, նուրբ՝ ինչպէս ստուերը, աշխոյժ, բայց սիրտը շատ զգայուն է:

33. Սելինի հետ բարեկամներ են դարձել, բաւական է միասին լինեն՝ չճանճրանալու համար: Ամէն օր, ճաշը հագիւ վերջացրած, Սելինը վազում է իր աքաղաղի մօտ, գրկում նրան, ապա յանկարծակի վրայ հասնելով, ինչ որ մի խորամանկութեամբ, բռնում է նաեւ Թերեզայի հաւին, ինչը ես ինքս չեմ կարողանում անել. բայց նա այնքան ճարպիկ է, որ յաջողութեան է հասնում առաջին իսկ փորձից: Ապա երկուսով նստում են վառարանի մօտ ու այսպէս զբաղւում բաւական երկար ժամանակ: (Այդ հաւն ու աքլորը նուիրել էր ինձ տիկին Թայյէն<sup>3</sup>, ես էլ իմ հերթին նուիրեցի աղջիկներին): Երէկ չէ առաջի օրը Սելինը իմ սենեակում քնեց, իսկ Թերեզան՝ վերելի յարկում, Սելինի սենեակում: Լուիզային աղաչել էր իրեն վար լիցնել, որպէսզի մենք իրեն հագցնենք: Սակայն երբ Լուիզան բարձրացել էր նրան բերելու, դատարկ անկողինն էր միայն գտել: Փախել էր Սելինի մօտ: Լուիզան սկսեց համոզել. "Եկ, հագնուիր": Եւ ահա թէ ինչ պատասխան ստացաւ. "Ա՛հ ո՛չ, Լուիզա, մենք այն երկու հաւերի պէս ենք, չենք կարողանում իրարից բաժանուել": Այս ասելով, իրար փաթաթուեցին: Երեկոյեան Լուիզան, Սելինն ու Լէոնիան զնացել էին մասնակցելու կաթողիկէ ակումբին եւ տանը մենակ էին թողել խեղճ փոքրիկին, որը, սակայն, լրջօրէն գիտակցում էր, որ դեռ չափազանց փոքր է՝ նրանց ընկերանալու համար: Հառաչում էր. "Ա՛հ, բաւական է՝ որ ինձ Սելինի անկողնում պառկեցնեն": Բայց ոչ, նրան այնտեղ չպառկեցրին ... չասաց պլեւս ոչինչ, մենակ մնաց իր կանթեղի հետ, իսկ տասնհինգ րոպէ անց՝ արդէն քնած էր խոր քնով»<sup>4</sup>:

34. Մի ուրիշ առիթով, մայրիկը գրում է. «Սելինն ու Թերեզան անբաժանելի են, անհնարին է ուրիշ երկու երեխաներ գտնել, որոնք այսքան կապուած լինեն միմեանց: Երբ Մարիան գալիս է Սելինին դասախօսութիւններ տալու, տարիքով աւելի փոքր Թերեզան ամբողջովին արցունքներով է ծածկւում. ախր ի՞նչ է լինելու իր վերջը, երբ ընկերուհուն հեռացնում են իրենից: Մարիան, սակայն, երբեմն խղճում է ու վերցնում է նաեւ նրան, եւ այդ խեղճ մանուկը աթոռի վրայ անշարժ մնում է երկու կամ երեք ժամ. տալիս են նրան մարգարիտներ՝ թելին անցկացնելու համար, կամ մի փոքրիկ կտոր գործուածք՝ ասեղնագործելու համար, բայց նա չի համարձակւում շարժուել եւ յաճախակի խոր հառաչանքներ է արձակում: Երբ թելը դուրս է գալիս ասեղի անցքից, ամէն ինչ անում է այն կրկին թելելու համար. հետաքրքիր է նրան տեսնելը, երբ ո՛չ կարողանում է, ո՛չ էլ համարձակւում է անհանգստացնել Մարիային: Քիչ անց, արցունքի երկու խոշոր կաթիլներ գլորւում են պտերի վրայով: Մարիան իսկոյն մխիթարում է նրան, կրկին թելում ասեղը, եւ խեղճ հրեշտակիկը ժպտում է արցունքների միջից ... »<sup>5</sup>:

<sup>1</sup> Լուիզա Մարայիսը մինչեւ Տկն. Մարթինի մահը ծառայում էր Մարթինների ընտանիքում:  
<sup>2</sup> Փոքրիկ զոհողութիւններ կամ ջերմեռանդ գործեր, ժողովրդական լեզուում նաեւ՝ «ծաղիկներ»:  
<sup>3</sup> Թերեզայի դայեակը:  
<sup>4</sup> Տկն. Մարթինի 8 Նոյ. 1876 թուակիր նամակը Փօլինին:  
<sup>5</sup> 4 Մարտ 1877 թուակիր նամակը:

35. Իսկապէս, յիշում եմ, որ չէի կարողանում առանց Սելինի մնալ, նախընտրում էի սեղանից հեռանալ անուշեղէնը դեռ չկերած, քան չհետեւել նրան, երբ ոտքի էր կանգնում: Շարժում էի հակայական աթոռս, խնդրելով որ վար իջեցնեն ինձ. իսկ յետոյ՝ դուրս, միասին խաղալու: Երբեմն գնում էինք փոքրիկ «քաղաքապետուհու» հետ խաղալու, ինչը ինձ շատ հաճելի էր՝ այդու եւ այն բոլոր գեղեցիկ խաղալիքների պատճառով, որ նա ցուցադրում էր մեզ<sup>1</sup>: Բայց իրականում, այնտեղ գնալուս ամենամեծ դրդապատճառը Սելինին հաճոյք պատճառելն էր, որովհետեւ աւելի նախընտրում էի մեր փոքրիկ պարտէզում մնալ՝ պատերը քերելու համար, որոնցից դուրս էինք կորզում այն բոլոր փայլիլուն վահանակները, որոնք երեկոյեան Հայրիկին էինք վաճառում, որը գնում էր դրանք մեծագոյն լրջութեամբ:

36. Կիրակի օրերը, քանի որ չափազանց փոքր էի՝ եկեղեցական արարողութիւններին մասնակցելու համար, մայրիկը տանն էր մնում, որպէսզի հսկէր ինձ. խելօ՛ք խելօք էի պահում ինձ եւ ոտքերիս ծայրերի վրայ էի քայլում ամբողջ Պատարագի ընթացքում, բայց հագիւ էի նկատում դուան բացուելը, բռնկւում էի մի ուրախութեամբ՝ որն իր նմանը չունէր. վազում էի շատ գեղեցիկ քրոջս մօտ, որ վերադառնում էր «տօնական զարդարուած՝ ինչպէս մի մատուռ»<sup>2</sup>, եւ ասում նրան. «Ախ իմ փոքրիկ Սելին, դէ արթնացիր, օրհնուած հաց տուր ինձ»: Երբեմն, շատ ուշ վերադառնալով, օրհնուած հաց չէր ունենում ... : Ի՞նչ էր արւում այդպիսի դէպքերում: Չէի կարող օրհնուած հացից հրաժարուել. «Իմ Պատարագն էր»: Դեղամիջոցն իսկոյն գտնուեց. «Օրհնուած հաց չունե՞ս: Է՛լ լաւ, դու ինքդ օրհնիր»: Ասուածն արուած է. Սելինը մի աթոռակ էր վերցնում, բացում պահարանը, գտնում հացը, կտրում նրանից մի կտոր եւ մեծ լրջութեամբ մի «Ողջոյն քեզ, Մարիամ» արտասանելով տալիս էր ինձ. իսկ ես, երեսս Խաչի նշանով կնքելուց յետոյ, ճաշակում էի ջերմ բարեպաշտութեամբ, եւ նոյնիսկ գտնում որ համը ճիշտ օրհնուած հացինն էր ... : Յաճախ էինք միասին հոգեւոր խորհրդաժողովներ գումարում: Ահա մի օրինակ, որը նոյնպէս քաղել եմ մայրիկի նամակներից. «Մեր երկու սիրելի փոքրիկները՝ Սելինը եւ Թերեզան, օրհնութեան հրեշտակներ են, դրախտային էակներ: Թերեզան Մարիայի ուրախութիւնն է, երջանկութիւնն ու փառքը, անհաւատալի է՝ որ Մարիան նրա վրայ բարկանայ: Եւ իրօք, իր տարիքի համեմատ հագուողէպ սուղադիմութիւններ ունի, գերազանցում է Սելինին, որն իր կրկնակի տարիքին է: Մի քանի օր առաջ, Սելինը հարցնում էր. "Բայց ինչպէ՞ս կարող է բարին Աստուած գտնուել այսքան փոքրիկ Նշխարի մէջ": Թերեզան պատասխանեց. "Այդքան էլ բացառիկ բան չէ, քանի որ Աստուած ամենակարող է": "Ի՞նչ է նշանակում ամենակարող լինել": "Որ կարող է անել այն ամէնը՝ ինչ կամենում է"<sup>3</sup>:

37. Մի օր, Լէոնիան, հայելու ապակիով խաղալու համար իրեն այլեւս բաւական մեծահասակ համարելով, մեր երկուսի մօտ եկաւ զգեստներով ու գեղեցիկ գործուածքների կտորներով լի մի գամբիւղիկով. մտադիր էր այդ կտորներով նոր զգեստներ կարել: Այդպիսի հարստութիւնների առջեւ հայելու ապակին մոռացութեան մասնուեց: «Վերցրէ՛ք, քոյրիկներ իմ, ընտրեցէ՛ք. ձեզ եմ տալիս ամբողջը»: Սելինը երկարեց ձեռքը ու վերցրեց զարդերի մի տուփ, որոնք իրեն մեծ հաճոյք էին

<sup>1</sup> Մարթինների տունը գտնւում էր քաղաքապետարանին դէմդիմաց:  
<sup>2</sup> Պրն. Մարթինի ընտանեկան արտայայտութիւններից մէկը:  
<sup>3</sup> Տկն. Մարթինի 10 Մայիս 1877 թուակիր նամակը Փօլինին:

պատճառում: Ես մի պահ մտածեցի, ապա ձեռքս երկարելով ասացի. «Ես ընտրում եմ բոլորը», ու վերցրի զամբիւղն առանց այլեւայլ քաղաքավարութիւնների: Դէպքին ներկայ անձինք շատ արդարացի գտան արարքս, եւ Սելինը նոյնպէս չմտածեց անգամ բողոքել (պէտք է նաեւ յիշել, որ խողալիքներ նրան չէին պակասում, որովհետեւ իր կնքահայրը<sup>1</sup> նուէրներով էր ողողում իրեն, ինչպէս նաեւ Լուիզան գտնում էր միջոցը՝ հոգալու այն ամէնը՝ ինչ նա փափաքում էր):

Մանկութեանս տարիներին պատահած այս փոքրիկ դէպքը ամբողջ կեանքիս համառօտագրումն է. աւելի ուշ, երբ իմ առջեւ տարածուեց կատարելութիւնը, հասկացայ՝ որ Սրբուհի դառնալու համար հարկաւոր է շատ տառապել, փնտռել միշտ աւելի կատարեալը եւ մոռանալ ինքներս մեզ. հասկացայ, որ կան սրբութեան բազում մակարդակներ, եւ որ իւրաքանչիւր անձ ազատ է մեր Տիրոջ հրաւերներին պատասխանելու գործում, Նրա համար շատ կամ քիչ աշխատելու մէջ, մի խօսքով՝ ընտրելու այն գոհերը, որ նա պահանջում է: Այնժամ, ինչպէս մանկութեանս օրերին, բացականչեցի. «Աստուած իմ, ընտրում եմ բոլորը: Չեմ կամենում Սրբուհի լինել կիսով չափ, չեմ վախենում Քո համար տառապելուց: Վախենում եմ միայն մի բանից. կամքիս ազատութիւնից: Վերցրո՛ւ այն, որովհետեւ ընտրում եմ այն բոլորը՝ որ կամենում ես Դու ... »:

38. Հարկ է՝ որ կանգ առնեմ. առայժմ չպէտք է խօսեմ պատանեկութեանս շուրջ, այլ պիտի պատմեմ չորս տարեկան չարածճի մասին: Յիշում եմ մի երազ, որ տեսայ այդ շրջանում, եւ որը խոր կերպով տպաւորուեց յիշողութեանս մէջ: Ահա դուրս էի գալիս տնից՝ պարտէզում զբօսնելու համար, միայնակ: Հասնելով այն աստիճաններին, որոնք տանում են դէպի պարտէզ<sup>2</sup>, կանգ առայ զարհուրած: Առջեւս, դալարազարդ ամպհովանիի մօտ, կիրով լի մի տակառիկ կար, որի վրայ զարմանալի ճարպկութեամբ պարում էին երկու քստմնելի սատանաներ, թէեւ ոտքերին կապուած ծանր շղթաներ էին կրում: Նախ մի հրացայտ հայեացք նետեցին վրաս, ապա, նոյն պահին իսկ նկատեցի՝ որ, ինձնից աւելի սարսափահար, տակառի մէջ գահավիժեցին, եւ չգիտեմ՝ ո՞ր անցքից դուրս գալով՝ լուացքատան ներսում թաքնուեցին, որը ճիշտ դիմացում էր գտնուում: Տեսնելով նրանց այսքան անարի, կամեցայ տեսնել թէ ինչով էին զբաղուած այնտեղ, եւ մօտեցայ պատուհանին: Սատանաներն այնտեղ էին, վազում էին սեղանների վրայ, եւ չգիտէին՝ թէ ուր թաքնուէին հայեացքիցս. երբեմն տաքնապահար կերպարանքով մօտենում էին պատուհանին, ստուգելով՝ թէ արդեօք դեռ այնտե՞ղ էի, եւ տեսնելով ինձ՝ վերսկսում էին իրենց յուսահատ վազքը: Անշուշտ, այս երազը մի արտակարգ բան չէ, եւ սակայն ես կարծում եմ, որ Աստուած ինձ այն յիշեցնում է փաստելու համար, որ շնորհի մէջ գտնուող հոգին սատանաներից վախենալու ոչինչ էլ չունի, սատանաներ վախկոտ ու փոքրոգի, որ փախչում են փոքրիկ մանկան հայեացքից անգամ:

39. Ահա մի այլ հատուած մայրիկի նամակներից: Այդ խեղճ մայրիկն իր աքսորի վերջանալու նախազգացումն արդէն ունէր<sup>3</sup>: «Երկու փոքրիկներն ինձ չեն

<sup>1</sup> Վիթալ Ռոմէն՝ Պրն. Մարթինի ընկերը:

<sup>2</sup> Պարտէզը գտնուում էր տան ետեւում, տաններէք մետր երկարութիւն ունեցող ծառուղու վերջում: Այնտեղ հասնելու համար, դուրս գալով տան շուրջբոլորը գրաւող փոքրիկ բակից, հարկաւոր էր բարձրանալ չորս փոքրիկ աստիճաններ, ծառուղի մտնելու համար: Կիրով լի տակառը գտնուում էր պարտէզի խորքում, բայց տեսանելի էր նաեւ աստիճանների մօտից: Լուացքատունը գտնուում էր աջ կողմում, պարտէզի մուտքին:

<sup>3</sup> Տկն. Մարթինը տառապում էր չարկեղային հիւանդութեան տեսակներից մէկով: Առաջին նշաններն ի յայտ էին եկել 1865ին: 1876ին բժիշկներն այլեւս անբուժելի յայտարարեցին Տկն. Մարթինի դէպքը:

մտահոգում, բարի են երկուսն էլ, ընտրեալ էակներ են, վստահ եմ որ բարի են լինելու: Մարիան եւ դու կարող էք դաստիարակել նրանց կատարեալ կերպով: Սեւիլը կամովին գործուող փոքրագոյն յանցանքների հետ անգամ չի հաշտուում: Փոքրիկը նոյնպէս բարի է, երբեք սուտ չի խօսում, եթէ նոյնիսկ աշխարհի ամբողջ ոսկին իրեն խոստանաս, եւ մի հոգի ունի՝ ինչպիսին չտեսայ ձեզնից ոչ մէկի մօտ<sup>1</sup>:

Մի քանի օր առաջ երչիկավաճառի մօտ էր գնացել՝ Սեւիլի եւ Լուիզայի հետ, ամբողջ ճանապարհին իր «փորձառութիւնների» մասին էր խօսել ու բարձրաձայն պատճառաբանել Սեւիլի հետ: այնքան՝ որ խանութպանը հարցրել էր Լուիզային. «Բայց ի՞նչ է կամենում ասել, ինչ որ փորձառութիւնների մասին է միայն խօսում»:  
Տիկին Գոչէրէնը<sup>2</sup> նոյնպէս, երբեմն պատուհանից դուրս է հանում գլուխը եւ ջանում հասկանալ թէ ինչ է նշանակում փորձառութիւնների շուրջ զրոյցը ... :

Այս խեղճ փոքրիկը: Մեր ուրախութիւնն է: Բարի կը լինի, արդէն իսկ տեսանելի է բողբոջը. ուրիշ նիւթի շուրջ չի խօսում, սլլ միայն՝ բարի Աստուծոյ մասին, եւ երբեք, ոչ մի պատճառով, չի թերանում իր աղօթքների մէջ: Պիտի ուզէի, որ տեսնէիր՝ թէ ինչպէս է փոքրիկ աւակներ արտասանում. այսպիսի ազնիւ բան երբեք չեմ տեսել: Ինքնուրոյն գտնում է արտայայտելու ձեւը, որ պէտք է տայ, եւ ձայներանգը, բայց յատկապէս երբ ասում է. "Շիկահեր փոքրիկ մանուկ, քո կարծիքով, ուրեմն, ո՞ւր է բարին Աստուած", եւ երբ հասնում է այն կէտին՝ ուր ասում է. "Այնտեղ վերեւում է, կապոյտ երկնքում", հայեացքն ուղղում է դէպի վեր, մի հրեշտակային ակնարկով, եւ մարդ չի յոգնում այդ տողերը նրան կրկնել տալուց, այնքան՝ գեղեցիկ է եւ իր հայեացքի մէջ ինչ որ մի երկնային բան ունի, որ հիացնում է մեզ»<sup>3</sup>:

40. Ա՛հ, Մայր իմ, որքան՝ երջանիկ էի այդ տարիներին: Արդէն սկսում էի վայելել կեանքը, առաքինութիւնը մի հմայք ունէր իմ համար, եւ էի, որքան որ յիշում եմ, այն նոյն տրամադրութիւններում որոնցում եմ այժմ, ունենալով արդէն հօր տիրապետութիւն արարքներիս վրայ: Ա՛հ, որքան արագ անցան մանկութեանս տարիները, բայց եւ ինչ քա՛ղցր կնիք թողեցին հոգուս վրայ: Ուրախութեամբ եմ յիշում այն օրերը, երբ հայրիկը տանում էր մեզ «Pavillon»<sup>4</sup>. սրտիս խորքում տակաւին փորագրուած են չնչին մանրամասնութիւններն անգամ ... : Բայց յատկապէս յիշում եմ կիրակնօրեայ զբօսանքները. մայրիկը միշտ ընկերակցում էր մեզ: Կրկին ու կրկին ապրում եմ ներքին այն վեհ զգացումները, որոնք հոգուս խորքում ծնւում էին շուշաններով ու դաշտային այլ ծաղիկներով գեղազարդուած ցորենի արտերին ի սեռ: Արդէն իսկ սիրում էի հեռաւոր հորիզոնները: Ընդարձակ տարածութիւնն ու հսկայական եղեւնիները, որոնց ոստերը հպւում էին հողին, այնպիսի տպաւորութիւն էին թողնում վրաս՝ ինչպիսին զգում եմ նաեւ այսօր, երբ դիտում եմ բնութիւնը ... : Յաճախ էինք այդ երկարատեւ զբօսանքների ընթացքում հանդիպում աղքատների, եւ միշտ փոքրիկ թերեզան էր յանձնարարութիւն ստանում՝ տանելու նրանց ողորմութիւն, եւ որքան՝ երջանիկ էր նա իր այդ պաշտօնի համար: Բայց հայրիկը երբեմն գտնում էր, որ քայլքը շատ յոգնեցուցիչ է իր փոքրիկ թագուհու համար. այսպիսի դէպքերում, սուղն էր ուղարկում նրան միւսներից առաջ (ի մեծ տհաճութիւն փոքրիկի): Իսկ Սեւիլը, աքսորուածին մխիթարելու համար, մի

<sup>1</sup> Փօլինին ուղղուած 22 Մարտ 1877 թուակիր նամակը:

<sup>2</sup> Հարեւանուհիներից մէկը: Պարտէզ մտնելու համար, հարկաւոր էր անցնել իր տան սահմանագծով:

<sup>3</sup> Փօլինին ուղղուած 4 Մարտ 1877 թուակիր նամակը:

<sup>4</sup> Փաւիլյոնը մի փոքրիկ խանութ էր, որ Պրն. Մարթինը ձեռք էր բերել ամուսնութիւնից առաջ: Գտնւում էր «des Lavoires» փողոցի վրայ, որն այժմ կոչւում է «Pavillon Sainte Thérèse»:

մեծ կողով մարդարտածաղիկներ էր հաւաքում ու վերադարձին նուիրում նրան: Բայց աւա՛ղ, խեղճ բարի Տատիկը<sup>1</sup> երբեմն գտնում էր, որ իր թոռնուհու ծաղիկները բաւական չատ էին, եւ արդիւնքում՝ վերցնում էր նրանցից՝ Աստուածամօր իր արձանիկի համար: Սա հաճելի չէր Թերեզային, բայց նա զգուշանում էր տհաճութեան իր զգացումներն արտայայտելուց, որովհետեւ գեղեցիկ սովորութիւն էր դարձրել երբեք չբողոքելը, նոյնիսկ երբ փրցնում էին իր անձնական իրերը կամ ամբաստանում էին իրեն անարդարութեամբ: Սակայն սա իր արժանիքը չէր, այլ աւելի՝ բնածին առաքինութիւն: Յաւալի կը լինէր, եթէ այս բարի տրամադրութիւնս կորէր:

41. Իրօք, երկրի վրայ ամէն բան ժպտում էր ինձ: Ծաղիկներ էի գտնում ամէն քայլափոխիս, եւ գուարթ նկարագիրս օգնում էր ինձ՝ վայելելու կեանքը: Եւ սակայն, մի նոր շրջան էր բացւում իմ կեանքում: Պէտք է անցնէի վշտակրութեան բովից եւ տառապէի մանկութիւնիցս ի վեր, Յիսուսին աւելի վաղ նուիրուել կարողանալու համար: Նման պն գարնանային ծաղիկներին, որոնք սկսում են ծլարձակել դեռեւս ձեան տակ եւ ծաղկել՝ առաջին իսկ ճառագայթների ազդեցութեամբ. նոյնպէս նաեւ խոնարհ ծաղիկը, որի յուշերն եմ շարադրում այժմ, պէտք է որ անցնէր տառապանքի ձմռան միջով:



---

<sup>1</sup> Կիրակի օրերը, կէսօրից յետոյ, Պրն. Մարթինի մայրը այցելութեան էր գալիս իր սիրելիներին: